Առաջին տարի № 12 9 Մայիսի 1882

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԿԻՒՐԱԿԷ ՕՐԵՐԸ

Տարեկան բաժանորդագինն է հինգ ռուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է «ԱՐՁԱԳԱՆՔԻ» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։ Ստարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Редакція „Арцаганкъ“.

Առանձին համարները 15 կ. Յայտարարութիւնների տառին 2 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Վրաց Թագաւորական տան վերջին շառաւիղը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց Հեթանոսական Ընկերութեան նոյեմբերը Նամակ երևանից։ Երևանի արհեստաւորները։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Բագուից։ Զմիւռնիայի բողոքականների թիւը։ Բազուի քաղաքային հոդերը։ Տաճկական Հայաստանի բարենորոգումները։ Մշեցի-Բզլարեանցի Ճառը։—ԱՐԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Պոլսագիր։—ՖԵԼԻԵՏՕՆ։ Ժողովրդական գրագարանները։ Ալեքսանդրապոլի աղքատանոցը։—ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՎՐԱՑ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՏԱՆ ՎԵՐՋԻՆ ՇԱՌԱՒԻՂԸ....

Ձիշդ Հարիւր տարի առաջ (1782 թ.) Թիֆլիսի փողոցներում պտրտում էր մի տարօրինակ նշանագրեստ հագած ոմն Բէյնէգս և սորան միշտ ուղեկից էր Թիկնապահի պաշտօնով ու նոյն տեսակ նշանագրեստ հագած՝ Հերակլ II վրաց արքայի տասն և երկու տարեկան Ալէքսանդր թագաւորազն պատանին։ Այդ այն ժամանակներն էր, երբ Եկատերինէ կայսերուհին և իշխան Պօտեմկինը պարսից և օսմանցոց ձեռքից քրիստոնեայ ազգութիւնները ազատելու դիտաւորութիւն ունէին, երբ Ղարաբաղի մելիքները և Երևանայ կողմերի հայք հրաւիրում էին պատրաստուիլ մահմետական լուծից փրկուելու։ Մի գերմանացի բժիշկ Բէյնէգս, որ շատ ճանապարհորդած էր Արևելքում, իշ. Պօտեմկինից գործակատար ընտրուեցաւ Կովկասի քրիստոնէից ոգևորելու ապագայ յոյսերով։ Այդ բժիշկ Բէյնէգսը, – վերին աստիճանի յափշտակուող մի անձն, Թիֆլիսի մէջ փողոցէ փողոց պտրտելով Թագաւորազն մանուկ Ալէքսանդրի հետ, հրապիրում էր ժողովրդին գունդեր կազմել, ժողովուիլ Արարատեան դաշտում, խորտակել պարսից շահերի գահը, տիրել մինչև անգամ ամբողջ Անատոլիայի, կազմել Անդրկովկասում մի ուժեղ քրիստոնեայ տէրութիւն և շատ ուրիշ բարձր ձգտումներ ու ցնորքներ...։ Բժիշկ Բէյնէգսը իրան արդէն երևակայում էր ապագայ զօրքերի հրամանատար, հնարել էր իւր համար մի տարօրինակ նշանագգեստ, որով զարդարել էր, ինչպէս ասացինք, և իւր փոքրիկ թիկնապահին [1]։ Ահա այդպիսի անձի ձեռքում և այդպիսի յոյսերով դաստիարակվում էր մանուկ Ալէքսանդրը...։

Վրաց Թագաւորական տան վերջին ժամանակների պատմութիւնը մի գեղեցիկ խրատ է ազգերի և տէրութեանց համար։ Այդ պատմութիւնը ցոյց է տալիս, թէ որ աստիճանի հեռու է երջանկութիւնից մի տուն, ուր գերդաստանի անդամները ներքին ընտանեկան կռիւներով են զբաղուած. դա ցոյց է տալիս, թէ ինչպէս երկպառակութիւնները կործանում են ոչ միայն խարխուլ Թագաւորական տունը, այլ և մեծամեծ հարուածներ են տալիս ազգին և երկրին։ Աղա-Մահմետ-խանի Վրաստան մտնելը, վայրենի լեզգիների անդադար յարձակումնքները և երկրիս ընդհանուր թշուառութիւնը անցեալ դարու վերջին—լաւ ապացոյց են մեզ համար։

Յայտնի է որ Հերակլ II վրաց արքան ամուսնացած էր երեք անգամ՝ առաջին կնոջից ունէր մի աղջիկ, երկրորդից՝ արու զաւակ Գէորգի և մի աղջիկ, իսկ երրորդ ամուսնութիւնից (Դադիանների ցեղից Դարբայի հետ) վեց արու զաւակ (Եուլօն, Վախթանգ, Անտօն, Միրիան, Ալէքսանդր և Փարնաօզ) և երեք աղջիկ, ընդամէնը 7 արու զաւակ և 5 դուստր։ Վրաստանի օրէնքով թագաւորական գահը ժառանգում էին արու զաւակները հերթով՝ ըստ մեծութեան հասակի։ Հերակլի թագաժառանգը համարվում էր իւր աւագ որդին Գէորգին, որ դեռ հօր կենդանութեան ժամանակ նմանապէս ամուսնացած էր երկու անգամ և առաջին պսակից չորս արու զաւակ ունէր (Դաւիթ, Յովհան, Բագրատ և Թէյմուրազ) ու չորս դուստր, իսկ երկրորդից՝ հինգ արու զաւակ և երկու դուստր, ընդամէնը 9 ուստր և 7 դուստր։ Այդպէս ահա մի կողմը թողած թոռների հա-

[1]) Бутковъ Мат. для ист. Кавказа т. 2. стр. 121.

շիւը՝ միմիայն Հերակլը և իւր ժառանգը ունէին 28 զաւակ, որոնց նիւթական կեանքը ապահովելու խնդիրը Վրաստանի այն շրջաւան միջոցներում ծանր խընդիր էր և ծնողաց հոգատարութեան առարկայ։ Այդ հաշիւները պատճառ եղան ընտանեկան անբաւականութեանց։ Հերակլի վերջին ամուսին Դարիան, որ մի նշանաւոր կին էր, ամէն կերպ ջանք էր գործ դնում հալածել թագաժառանգ Գէորգուն և սորա ընտանիքը և յառաջ քաշել իւր հարազատ որդուցը։ Հերակլէ նման հանճարաւոր անձը չէր կարողանում իւր կնոջ ձգտումների առաջն առնել։ Մի կողմից Գէորգին, չ՚նայելով իւր հիւանդութեանը և բնական թուլութեանը, աշխատում էր ժառանգ հրատարակել ոչ Դարիայի որդի Եուլօնին, այլ իւր անդրանիկ զաւակ Դաւիթին, որին շտապեց ամուսնացնել Աբամելիքեան տէր Սիմէօն հայ քահանայի դստեր Հեղինէի վերայ։ Բայց Դաւիթի հայ աղջկայ վերայ պսակուիլը տեղիք տուեց Դարիայ թագուհուոյն զրգռել վրացի տգէտ անձանց ընդդէմ Գէորգու ժառանգին ու անվերջանալի շփոթներ յառաջ բերել։ Իրաց ցաւալի հետևանքները մանաւանդ զգալի եղան երկրիս համար, երբ պարսից ու վրաց յարաբերութիւնները թշնամութեան փոխուեցան։ Պէտք է այստեղ խոստովանել, որ վրաց ամբողջ թագաւորական գերդաստանի մէջ ամենից համարձակը, հանճարաւորը, պատերազմասէրը և մեծամեծ ձգտումների տէր անձը՝ էր Դարիայի 5-երորդ որդին Ալէքսանդրը, որ ծնել էր 1770 թուին։ Հերակլը, գիտենալով իւր որդի Ալէքսանդրի ընդունակութիւնները, մի գունդ զօրքով (1794 թ.) ուղարկեց յօգնութիւն Իմերէթի թագաւոր Սոլոմոնին։ Հազիւ այստեղից վերադարձել էր երիտասարդ Ալէքսանդրը յաղթութեամբ, որ ուղարկուեցաւ յօգնութիւն Շուշուայ և Երևանի խաներին՝ ընդդէմ Աղա-Մահմէդ-խանի, որի ուժն հազար զօրքը ջարդուեցաւ սոցա ձեռքով Ղարաբաղի սահմաններում։ Սակայն Աղա-Մահմէդ-խանը զայրացած յարձակուեցաւ Վրաստանի վերայ և սեպտեմբերի 11-ին 1795 թուի, այն է Թիֆլիսի կործանման օրը, պարսից դէմ մարտնչող թագաւորազների մէջ չէ յիշւում Ալէքսանդրը։ Թէ ո՞ւր էր նա այդ միջոցում, չ՚գիտենք։ Բայց նոյն թուին, պարսից յետ քաշուելուց յետոյ, Ալէքսանդրը՝ վրաց զօրքով գնում է պաշարում Գանջան։ Զանցաւ երկար միջոց։ 1797 թուին արդէն Հերակլը Թէլավում մերձ ի մահ հիւանդ էր, իսկ Թիֆլիսի մէջ մահատարածումը սաստիկ ջարդ էր տալիս, երբ որ Ալէքսանդրը, դժգոհ լինելով իւր ծնողներից և թագաժառանգ Գէորգուց, աշխատում էր Բորչալուի և Ղազախի թուրքերի օգնութեամբ մտնել Թիֆլիս և իրան անկախ թագաւոր հրատարակել։ Վախճանեցաւ (1798 թ. յունվ. 11) Հերակլ II արքայն և սորա մահուանը և յուզարկաւորութեանը ներկայ չ՚գտնուեցան ոչ ժառանգ Գէորգին, ոչ Ալէքսանդրը։ Առաջինը այդ միջոցում զբաղուած էր իրան թագաւոր հրատարակելով, երկրորդը վախում էր երևալ Գէորգու ձեռքը չ՚ընկնելու համար, որից մահ էր սպասում։ Սակայն և այնպէս, երբ Հերակլի դիակը բերել էին Մցխեթ թաղելու, մի դիշեր գաղտնի մտաւ եկեղեցին Ալէքսանդրը և, համբուրելով հօր անշնչացած մարմինը, հեռացաւ Դուշեթի կողմերը։

Գէորգին գահ նստելու օրից սկսեց իւր թշնամական յարաբերութիւնները դէպ իւր խորթ մայր Դարիայ թագուհին և սորա որդուցը, որոնցից փոքր առ փոքր խլում էր կալուածները և տալիս իւր հարազատ որդուց։ Այն օրուանից Ալէքսանդրը հեռացաւ իւր հայրենիքից։ Արագութեամբ անցնում է նա Ախալցխայ, այստեղից Իմերէթի, նորից Ախալցխայ, Ղարս և վերջապէս Գանջայ...։ Գէորգու զօրքերը եռևից էին ընկել բռնելու նորան, բայց չ՚յաջողուեցան։ 1800 թուականին թէև Թիֆլիսում երկու գունդ ռուսաց զօրք կար Գէորգու գահը պաշտպանելու համար, բայց Ալէքսանդրը լեզգիների Օմար-խանի հետ միացած ուզեցաւ յարձակուիլ Թիֆլիսի վերայ։ Եօր գետի մօտերքում 1800 թ. օգոստոսին արիւնահեղ պատերազմ եղաւ և լեզգիք յաղթուեցան։ Ալէքսանդրը ինքն էլ վերք ստացաւ և ստիպուած էր փախչիլ, բայց ոչ հանգստանալու մտքով։

Նախատեսանելով այն չարիքը, որ տակաւին պիտի յառաջ գան երկրի բնակչաց համար թագաւորական գերդաստանի մէջ օրէ ցօր մեծանող գժտութիւններից, Գէորգին իւր վախճանից առաջ յանձնեց իւր թագաւորութիւնը ռուսաց կայսեր Հովանաւորութեան։ 1800 թ. դեկտեմբերի 23 վախճանեցաւ վրաց վերջի արքայն Գէորգի XII և տեղը, համաձայն նախատես կարգադրութեան, այլևս ոչ ոք չ՚նշանակուեցաւ։ Վրացի թագաւորազն իշխանները գնացին Ռուսաստան։ Ալէքսանդրին ևս խոստացան ներումն և պատուաւոր ընդունելութիւն, բայց սա ցնորքներով յափշտակուած՝ անցաւ Պարսկաստան, երազելով շահի օգնութեամբ ձեռք բերել իւր հօր գահը...։ Այդ ժամանակներից մի մտերմութիւն ծագեց պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի և Ալէքսանդրի մէջ։ Վերջինս կարճ միջոցում կարողացաւ դրդել ռուսաց դէմ՝ Դաղստանցոց, Գանջայի և Երևանի խաներին ու վերջապէս պարսից շահին։ Մի քանի տարի շարունակվում էր պատերազմը, որոյ մէջ շատ անգամ անձամբ և կատաղի մասնակցում էր Ալէքսանդրը։ Ամենից շատ աղէտները կրողը այդ ժամանակ հայերն էին, որոց մի հատուածը մեծամեծ նեղութիւններով կարողացաւ փախչիլ վրաց արքայազունի աւերիչ զօրքերից և; հասնելով Թիֆլիս, բնակուեցաւ Հաւլաբար։ Ս. Էջմիածնի հոգևորականութիւնը, կամենալով վերջ տալ չարիքին, 1804 թուին, երբ իշխ. Ցիցիանովի հրամանատարութեամբ ռուսաց զօրքերը Երևանի մօտ էին, աշխատեց հաշտացնել Ալէքսանդրին ռուսաց հետ, բայց Ցիցիանովը հրպարտութեամբ մերժեց...։ Այնուհետև վրաց արքայզունը ստիպուեցաւ շարունակել իւր թշնամական յարա-

բերութիւնները։ Նորա ձեռքով 1805 թուին պարսից զօրքը մտաւ Ղարաբաղ՝ նորա դրդմամբ 1806 թուին ապստամբեցին Օսերը։ Նա մասնակցում էր տաճկաց պատերազմում ռուսաց դէմ 1807 թուին, պարսից—1808։ Նա բերեց հասցրեց պարսից գունդը 1809 թուին մինչև Թիֆլիսի մօտերը և քաղաքիս վերայ ահ ու սարսափ ձգեց։ 1811 թ. Ալէքսանդրը արիւնահեղ պատերազմ ունեցաւ ռուսաց հետ Ախալքալաքի մօտ, բայց չարաչար յաղթուեցաւ։ Չ'վհատելով և այս անյաջողութիւնից նա յարուցեց Կախէթի մեծ ապստամբութիւնը 1811 և 1812 թուականներին, որ այնքան ծանր նստեցաւ թէ տէրութեան թէ ժողովրդին։ Սակայն, երբ 1813 թ. պարսից շահը ստիպուեցաւ խաղաղութիւն հաստատել ռուսաց տէրութեան հետ, Ալէքսանդրը հեռացաւ Դաղստան, ուր տեղից նորից խնդրեց կայսեր ներողամտութիւնը, բայց շուտով յետ առաւ իւր խօսքը ու ոտքի կանգնացրեց Դաղստանի լեզգիներին։ Նորանոր անյաջողութիւններ կրելով, Ալէքսանդրը վերադարձաւ Պարսկաստան, ուր շահը պարգևեց նորան Դարալագեազը և Շարուրի մի մասը և պատուիրեց Ղարաբաղի ռուսական սահմանի վերայ բերդ շինել ու հրաւիրել ռուսահպատակ հայերին գալ բնակուիլ իւր կալուածներում։

Ժամանակագրական ճշտութիւնը պահելու համար, հարկաւոր է յիշել, որ այս անդամ պարսից տէրութիւնը մի առանձին ջանք է գործ դնում ամուսնացնել Ալէքսանդրին և սորանից արու զաւակներ ունենալ։ Պատմում են, որ դեռ 1792 թուին, 22 տարեկան Ալէքսանդրը, իւր հօր կենդանութեան ժամանակ, ցանկացել է ամուսնանալ Կաբարդացոց Մխոստով իշխանի դստեր վերայ, բայց Հարսնացուն, Թիֆլիս հասնելով, դեռ չը պսակուած՝ վախճանում է և երիտասարդը այլ ևս չէ կամենում կին առնել։ Մեզ յայտնի է, որ 1819 թուին պարսից գահաժառանգ Աբբաս-Միրզան ստիպում էր նորան պսակուիլ Տաճկաբնակ ասորոց պատրիարքի եղբօր աղջկայ հետ, բայց այդ խնամութիւնը չը կայացաւ։ Նոյն թուին Ալէքսանդրը դիմում է նամակով դէպի վրացի իշխան Լևան Աբաշիձէն և խնդրում է սորա եղբօր դուստրը ի կնութիւն։ Բայց իշ. Աբաշիձէն նորա նամակը տանում յանձնում է ժեներալ Երմոլովին և սորանից պատուէր է ստանում չը տալ աղջիկը։ Այնուհետև 1820 թուի մայիս ամսին Ս. Էջմիածնայ տաճարում կայանում է 50 տարեկան Ալէքսանդրի պսակը Երևանի Մելիք Սահակ Ադամալեանի 14 տարեկան Մարիամ դստեր հետ։ Մեծագին հարսանեաց ծախսը առատութեամբ վճարում է Աբբաս-Միրզան։

Զը նայելով ամուսնութեանը, Ալէքսանդրը դադձեալ չէ յետ կանգնում իւր անհանգիստ կեանքից։ 1820 թուին ապստամբուած Իմերէթցիք հրաւիրում են նորան իրանց թագաւոր, բայց տէրութիւնը արագութեամբ դադարացնում է խռովութիւնը։ Այնուհետև մի քանի տարի այլ ևս չէ լսվում Ալէքսանդրի անունը, յանկարծ 1826 թուին ամառը, առանց պատերազմ հրատարակելու, մի գունդ պարսից զօրք, Ալէքսանդրի ընկերութեամբ, հասնում է մինչև Թիֆլիսի մօտերքը և մեծամեծ յափշտակութիւններ անում, որից յետոյ սկսվում է 1826—1827 թ. պարսից պատերազմ։ Յայտնի է, որ 1827 թուի հոկտեմբերի 1-ին ռուսները առան Երևանը և նոյն տմսուայ 19-ին մտան Թաւրիզ։ Ալէքսանդրը ստիպուած էր անցնել տաճկաց սահմանը, բայց առանձին, թէ ընտանիքով—յայտնի չէ։ Յետագայ գրութիւնից իմանում ենք միայն, որ 1828-ից առաջ Նորան որդի է ծնել (Հերակլ) և Նորածին մանուկի մայրը—Մարիամը այդ միջոցում մի այլ տեղից վերադառնում է Երևան հօրը տուն։ 1828 թուի յունվարի 8-ին ժեներալ Կրասովսկին գրում է Երևանից ժեներալ Սիպեագինին՝ « Թագաւորազն Ալէքսանդրը այժմ գտնւում է ի Խրուս « (Խնուս?) Մշոյ երկրում, Արզրումի և Մշոյ մէջ տեղը։ « Նորա կինը (Մարիամը) իւր մատաղահաս մանուկով « (Հերակլ) վերադարձաւ Երևան՝ իւր հօր մօտ, այստեղի « հայոց գլխաւոր մեծաւորի Սահակ մելիքի, որ մեր « կուսակից և մեզ մեծամեծ ծառայութիւններ ցոյց « տուած մի անձն է » [2]) և այլն։ Այնուհետև Թագաւորազն Ալէքսանդրը նորից անցաւ Պարսկաստան, ուր և մնաց մինչևի մահը, այլ ևս չը տեսնելով իւր ընտանիքը։ Քանի մի անգամ, ինչպէս լսել ենք, հրաւիրում է նա իւր տիկնոջ՝ առնել մանուկը և գալ Խոյ տեսութեան, բայց այդ անկարելի էր իրագործել...։ « Մ ի ր զ ա յ, խ ա ն և Գ ե ու ր չ ս տ ա ն ի վ ա լի » տիտղոսները վայելելով, Ալէքսանդրը մինչևի մահը Պարսկաստանում զանազան պաշտօններ վարեց, բայց վերջի օրերը խղճութեան մէջ մեռաւ, ինչպէս վկայում են ականատեսները։ Նա վախճանեցաւ 1844 թուին և թաղուեցաւ Թէհրանի եկեղեցւոյ դրան առաջ աջ կողմից [3])։ Մի անշուք գերեզմանաքար ցոյց է տալիս այսօր նորա թաղման տեղը....։

Ականջից բաժանուած Թագաւորազն ամուսնուց, մատաղահաս Մարիամը՝ այնուհետև հօր - Մելիք Սահակի տանը իւր բոլոր սէրը, կեանքը նուիրեց իւր միայնակ յոյս, միայնակ մխիթարութիւն, կամենակեր մանուկ Հերակլին...։ Թէ քանի տարի շարունակուեցաւ պատանւոյ ընտանեկան դաստիարակութիւնը — իսկապէս մեզ յայտնի չէ։ Գիտենք միայն, որ Հերակլ ընդունուեցաւ Պետերբուրգի զինուորական ուսումնարաններից մէ-

---

[2])Եթէ այս գրութիւնը (տես А. К. А. К. т. VII стр. 7) լրաւ է, որ իրաւունք չունինք կասկածելու, այն ժամանակ սխալ է „Кавказъ» լրագրի հաղորդած տեղեկութիւնը, երբ թէ այս օրերս վախճանած Հերակլ իշխանը ծնած է 1828 թուին։

[3]) Акты. Кав. Арх. Ком. т. V յառաջաբանի մէջ պ. Բերժէն ասում է, որ Ալէքսանդր իշխանը մեռել է Թէհրանում և թաղուել Շահ-Աբդուլ-Ազիմի թաղում։

կում: Այնուհետև նա մտաւ զինուորական ծառայութիւն և հասնելով մինչև պօդպօլկովնիկի աստիճան՝ տկարութեան պատճառով արձակուրդ ստացաւ: Քանի մի տարի արտասահման մնալուց յետոյ, Հերակլը վերադարձաւ Թիֆլիս, ուր և ամուսնանալով անցուց իւր մնացորդ կեանքը, քաղաքական պաշտօններ կրելով: Չ'նայելով իւր երկաթէ կազմուածքին և նշանաւոր հսկայական ոյժին, երկարատև հիւանդութիւնը օրէ յօր մաշում էր նորան և անցեալ ապրիլի 27-ին վերջ տուեց նորա երկրաւոր կեանքին: Հերակլը վախճանեցաւ առանց արու ժառանգի, թողնելով իւր այրուոյ խնամքին երկու դուստր մանուկները...: Եօթանասնամեայ Մարիամ Թագաւհին դողդոջուն ձեռքերով խփեց սիրած որդւոյ աչերը և, արտասուքով ողողելով սորա դին, թագաւորազն վերջին շառաւիղի դագաղի վերայ ողբաց այն վշտերը, որ պատճառած էին երկրիս վրայ արքայական տան ընտանի երկպառակութիւնները...:

Ա. Երիցեանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լսում ենք, որ «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը» ուղարկել է Հարիւր րուբլի իբրև նպաստ իւր կողմից առաջիկայ ընդհանուր Հայոց Ուսուցչական ժողովի վարչութեանը: Որչափ մեզ յայտնի է, նորակազմ Ընկերութեան ունեցածը հազիւ հասնում է այժմ 1300 րուբլու և յիշեալ գումարը նորա առաջին, կարելի է ասել, անդրանիկ ծախսն է: Ուրախալի երևոյթ է, որ «Հայուհեաց Ընկերութիւնը» այսպիսի մեծ նշանակութիւն է տալիս Ուսուցչական ժողովին և առողջամտութեամբ նայում է այն սերտ կապի վերայ, որ ունի բարեգործութիւնը ժողովրդի դաստիարակութեան և կրթութեան հետ: «Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան» առաջին քայլերը իւր գործունէութեան ասպարիզի վերայ խոհեմ և գովելի են և եթէ կը շարունակէ այսպէս իւր վսեմ գործը, անտարակոյս կը վայելէ միշտ ժողովրդի համակրութիւնը և կ'ունենայ մեծ յաջողութիւն ապագայում:

* * *

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

30 ապրիլի, 1882 Թ.

Չեմ իմանում ինչից սկսեմ յօդուածս: Տեսածներս նկարագրեմ արդեօք, թէ լսածներս: Արդեօք գրեմ այնպէս, ինչպէս տեսել ու լսել եմ, թէ համառօտեմ, խնայեմ կէտերը թողնեմ որ արգելք չլինին տպագրութեան. ահա, այսպիսի մտքերով եմ զբաղվում ամէն անգամ, երբ մի քանի խօսք եմ ուզում գրել լրագրութեան: Վերջ ի վերջոյ այն համոզման եմ գալիս, որ հարկաւոր է միայն տեսածներիս ու լսածներիս մի նիհար կմախքը միայն ստորագրել, „ուշիմ" ընթերցողին թողնելով դատողութիւններ ու եզրակացութիւններ անելու արտօնութիւնը: Սկսեմ լուրերից:

Մեր Թեմակալի գեր. վոխանորդը քանի մի օր առաջ շրջաբերական է ուղարկում քաղաքիս քահանաներին, որ չըհամաձայնին ժամասացութիւնից վախչել: Չըմանագրուելուց երկու—երեք օր չ'անցած ս. Սարգիս եկեղեցու քահանաները, կարծես խօսքը մին արած, երեք օր շարունակ եկեղեցի չեն գնում: Գեր. վոխանորդն ինքն է ստիպուած ժամ ասում. և վերջոյ երեք քահանաներն էլ փլուզները վերցնում և նոցա տեղը ուրիշ քահանաներ է նշանակում:

Թիֆլիսցի մի քահանայ էլ, տէր Յ. Թեմուրազեանցին, չ'հաս պսակ անելու համար Հոգևոր իշխանութիւնը վճռել է ուղարկել Հաղբատ երեք ամսով, բայց տէր Հայրը փոխանակ վճռին հնազանդելու, չորս ամիս է ելմնացնում Թաւփառում է, յանդգնելով դրամ առաջարկել վճիռը փոխելու համար. երբ Համոզվում է, որ այդ անկարելի է, հաւատը փոխում է. բարձրագոյն Հ. իշխանութիւնը լսելով այդ, ասում են, կարգը նկեց է անում [1]): Այդ բոլորը տէր-տէրն ինքն ինձ պատմեց և այս էլ աւելացրեց Թէ. „Ճշմարիտ է հաւատս փոխում եմ, բայց սրտով էլի Հայ եմ մնալու:"

Անցեալ օրը „Թաղագիւղի" Հայերը, մօտ 2—300 Հոգի, այր և կին ժողովուել էին Նահանգապետի տան առջև, երբ պ. Նահանգապետը դուրս եկաւ, շրջապատեցին նորան և ոստոկի եռանդով խնդրում էին որ անյապաղ կատարէ լրանց վաղուց ներկայացրած խնդիրքը, որով յայտնած են Թէ „Ուլուխանլու գիւղի Թուրքերը ուժով յափշտակել են լրանց հողն ու ջուրը և չեն Թողնում որ այժմ վարուցանք անեն այն տեղերում, որոնք օրէնքով լրանց են պատկանում: Նահանգապետը բերանացի պատուէր տուաւ գաւառապետին, որ գնայ հողերը Թուրքերից յետ առնի և յանձնի Հայերին, բայց գաւառապետը յայտարարեց, որ մինչև պ. Նահանգապետը գրաւոր չ'Հրամանագրէ, ինքը չէ կարող այդ պատուէրը կատարել: Չ'գիտեմ, այս բանագնացութեան վախճանն ինչ եղաւ: Ասում են, որ յիշեալ Թուրքերն և Հայերն մէջ մեծ կռիւ է պատահել և շատերն են վիրաւորուել, ոմանք էլ այդ առթիւ բանտարկուեցան: Հայերը լաց էին լինում և ասում, որ եթէ շուտով կարգադրութիւն չ'լինի, կը զրկուին վարուցանքից և քարուքանդ կը լինին: Նոքա շատ վայրացած էին. լաւ է որ գինւորները շուտ Հասան:

Գողութիւնն ու անկարգութիւնը Հետզհետէ շատանում է Թէ նահանգիս և Թէ քաղաքիս մէջ: Տասն օրուայ ընթացքում գիշերով 3 խանութ կոտրեցին գողերը. մէկից տարան 17 վուԹանոց մի արկղ, մէջը 6—7000 րուբլի. երկրորդից՝ 200 րուբլի. երրորդից՝ 50 րուբլի. ասում են, որ վերջին երկու դէպքին ոստիկանութիւնը Հաւատ չէ ընծայում:

---

[1]) Աբարատի ամառանոցում դուրս է բերած տէր Յ. Թեմուրազեանի բոլոր յանցանքները և վ.Հկափառի Հրամանը Թիֆլիսի կոնսիստորիային, յիշեալ քահանային կարգընկեց անելու համար: Մենք տէր Հօրից ամէնայն բան սպասում ենք, միայն չենք կարծում, Թէ որևէ Հոգևոր արժան Համարի նորան իւր եկեղեցու գլխին ընդունելու:

Ծ. խ.

Անցեալ օրերում Թուրք մագոցծներից մեկին էլ սատակած ձիու մեռ էր ծախում: Իրատարակներից մեկը, պ. Մ. Տէր Սաքսեանը վրայ հասնելով շուկայապետի ձեռքով մին ուղարկում է ոստիկանութեան, որ հանգամանքն իմանայ, բայց շուկայապետը վախեցնում է մեզ, առանց ոստիկանութեան հասցնելու և ետուց ասում է որ ընդի համար էր ծախվում. Թէև մի քանի մշակներ դնել կին և տարել փուռը տուել եփելու:

Դեռ մի 3—4 ամիս չ'կայ, որ քաղաքային վարչութեան անդամները ընտրուեցան պ. պ. Պապաջանեան և Յովակիմ Անտոնեան: Անցեալ օրը 22 իրատարակ ատորագրութեամբ մի յայտարարութիւն մատւ քաղաքային խորհրդարանը, որով առաջարկվում է ընդհանուր խորհրդին կիսով չափ պահպանել անդամների ռոճիկը (որ է այժմ 1500-ական րուբլի): Գուցէ շուտով կը վճռուի այդ հարցը, որի հետեւանքը կը յայտնեմ անշուշտ ձեր ընթերցողներին: Քաղաքային վարչութիւնը մի տեսակ խաղալիք է դարձել մեր պ. պ. իրատարակների համար. այսօր ընտրում են անդամները, նշանակում են 1500-ական րուբլի տարեկան ռոճիկ և մի քանի օրից ետուց ծաղր ու ծանակ անում իրանց ընտրածներին, բամբասում, հայհոյում, խայտառակում թէ ապիկար են, ապուշնօրհ են, ոչինչ չեն անում և չեն էլ կարող անել. եկէք ռոճիկները պահպանենք և այլն: Մի հարցեղ չ'կայ դրանից թէ ուժ, լաւ մարդկի, ով էր ձեղ սոխսում որ դրանց ընտրէք: Հօ ամէնքդ էլ լաւ էիք ճանաչում դրանց, եթէ անպետան էին, ինչու ընտրեցիք. և եթէ պետանի էին, ինչպէս չանկարծ անպետանացան և եթէ իրաւ անպետան են, ա՛ինէ ռոճիկները պահպանելով կը լուսաննան:... Ես այս մարդկանցից ոչինչ չեմ հասկանում, մեղքս ինչ թաչցնեմ:

Աւելորդ չենք համարում մի երկու խօսքով յայտնել, թէ ինչպէս են սկսվում և վերջանում խորհրդի նիստերը: Քաղաքագլուխը գրաւոր հրաւիրում է իրատարակներին, ցուք ժամի 7-ին: Գալիս են հազիւ մինչև ժամի 8—9-ը: Նիստը կայանում է: Քաղաքագլուխը իւր անդամների հետ դուրս է գալիս խորհրդարան. ամէնքը ոտքի են կանգնում. զանգը հնչում է: Նիստը բացուած է: Քարտուղարը կարդում է ռուսերէն անցեալ նիստի արձանագրութիւնը. Թարգմանը Թարգմանում է Թուրքերէն, Թէև ժողովի մէջ մի հատը Թուրք և բոլոր մնացածները Հայեր լինէին:

Քաղաքագլուխը հարցնում է. ո՞վ ինչ ունի արձանագրութեան դէմ. ով ինչ կարողանում է, ասում է. նկատողութիւնները աւելցնվում են. ապա սկսվում են նոր առաջարկութիւնները: Քաղաքագլուխն առաջարկում է. Թարգմանը Թուրքերէնի է դարձնում, և հարկէ ոչ առանց համառոտելու: Վիճաբանութիւնն սկսվում է: Եթէ խօսածը հայերէն է, պէտք է Թարգմանել Թուրքերէնի. վիճաբանութիւնը երկարում է: Նայիր դէպի իրատարակները. մի երկուսը ննջում են, մի քանիսը արդէն քնել են նստատած տեղներում. ոմանք մի կողմը քաշուած ուրիշ առարկայի վերայ են փոխում մինեանց հետ, մերթ ծիծաղում, մերթ խանգարում խօսողին: Քաղաքագլուխը զանգը հնչեցնում է ուշադիր լինելու: Ննջողները ու քնածները յանկարծ վեր են թռչում. նայում են որ մեկը կշտներին կանգնած է, իրանք էլ կոխոյն կանգնում են, կարծելով Թէ վճռուն է կարդացվում. բայց դգալով իրանց սխալմունքը, շփոթած մնում են կանգնած: Քաղաքագլուխը հարցնում է Թէ ինչ են կամենում. պատասխանում են՝ „ոչինչ, ասան կանգնած էր, ես էլ կանգնեցի“... Սիծաղ: Քաղաքագլուխը հարց է գնում դիցուք այսպէս.—„ո՞վ համաձայն է այս խնդրին կանգնել. ով որ չ' նատի: Լինում են շատերը, որ կանգնողների հետ կանգնում են, չետոյ նստում են դոյա հետ և էլի կանգնում են կամ նստում հակառակ կողմի հետ վա. դուրս է գալիս որ երկու կողմի հետ էլ համաձայն են... Այս կերպ են վճռվում շատ խնդիրներ, այդ պատճառաւ էլ մեկնողն վճիռը կարելի է լինում մի քանի անդամ քանդել և նորից վճռել. ոչինչ հաստատուն չէ մեզանում:

ԴԷՏ

*
* *

ԵՐԵՒԱՆԻՑ պ. Բուրնազեանը հաղորդում է՝

Քաղաքիս մէջ այս օրերս բարհուրելի աւազակութիւնները պատահեցան. վաճառականները որոշեցին՝ որ իւրաքանչիւրը քնէ իւր խանութում. միայն տեղւոյս ոստիկանութիւնը խստիւ պահանջեց՝ որ գիշերապահները պարտաւորուած պահպանեն խանութները մինչև նորերի վարձուելը:

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ այստեղի արհեստաւորները մտադիր են մի ընկերութիւն կազմել շաբաթական մի Թեթև անդամակցական տուրք նշանակելով, որպէս զի այսուհետև իրանց չքաւոր արհեստակիցների որդոցը և ընտանեացը նպաստ հասցնելու համար ստիպուած չլինին ուրիշների օգնութեանը դիմել:

*
* *

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

1 մայիսի, 1882 Թ.

Քաղաքային ինքնավարութիւնը մեզանում մտցուած է 1876-ին, ռուս-տաճկական պատերազմից մի քանի ամիս առաջ:

Գործի նորութիւնը, ժողովրդի անպատրաստականութիւնը և վերահաս պատերազմը մեծ արգելք դառան, որ 1870-ի քաղաքային կանոնադրութիւնից ոպատուած օգուտը ստանար Ախալցխան: Բոլորի ուշ ու միտքը, գործունէութիւնը լարուած էր պատերազմով: Քաղաքի դումարները գրեթէ ամբողջապէս զինուորներն էին սպառում իրանց բազմադիմի և անհրաժեշտ ծախքերով: Զեմստվոն, Հշմարիտ է, այդ դէպքում գրամական նպաստներ հասցնում էր քաղաքին, բայց համեմատաբար շատ անչնչին: Այս րոպէիս, երբ պատերազմը վերջացած է, Ախալցխայի բոլոր արգելանքն մատ կէս մասը (12—15 հազար րուբլի) գործաց վերայ է գնում ամէն տարի: Ցիշեմ այստեղ այդպիսի ծախքերից մի քանիսը:

ա.) 1870 Թուականին Ախալցխան պարտաւորուեցաւ տալ զինուորական իշխանութեանը մատ մատ 10 տարուայ ընթացքում, 14,500 ր. այն պայմանով, որ դորա վերայ իրանից և ուրիշ դումար վեր գալով զինուորական իշխանութիւնը զօրանոցները շինէ մի հեռւակ գոգի հաշիւ: Խոստացած դումարը քաղաքը վճարեց, մի քանի տասնեակ դեսեատին ձրիաբար հող էլ տուեց, բայց 10 տարուայ ընթացքում իշխանութիւնը խոստացուած շինութիւնների հարկ մի մասը շինեց. մնացածները դեռ պիտի շինէ: Մինչդեռ զօրաց բնակարաններ վարձելը դեռ մինչև այսօր քաղաքի վերայ է ծանրացած: Ձայներ կան, Թէ մնացեալ շինութիւնները այլ ևս շինուելու չեն: Այդ լուրը ինձ հաւանական է Թուում, որովհետև սահմանի առաջ անցնելովը Ախալցխան կորցրեց իրան առաջուան ռազմավարական նշանակութիւնը, Թէպէտ և, իհարկէ առած, այդ քաղաքը մի այդ-

պիսի նշանակութիւն երբէք չէ ունեցել հնուհիւ երան քնա-
կան, աննախանձելի դիրքին:

բ.) Քաղաքային կանոնադրութեան զօրութեամբ քա-
ղաքը պարտական է մինչեայն տեղապահ (гарнизонъ) զօրքե-
րին բնակարան տալ, իսկ մնացեալներին ոչ: Բայց պատերազ-
մից առաջ էլ, յետոյ էլ, այստեղ մնում են շարունակ մի
քանի ուրիշ զօրաբաժիններ, որոց ծախքը նմանապէս քա-
ղաքն է հոգում (բնակարան, վառելիք, լուսաւորութիւն,
անկողին): Այդ բաների համար հարկաւորուած ծախսից գու-
մարը քաղաքային վարչութեան պիւտճէի մէջ ամէն տարի
մի պատկառելի գումար է ներկայացնում: Յիշում եմ. Թիֆ-
լիսի քաղաքային խորհրդարանը այդ հարցով մի ժամանակ
զբաղուեցաւ, այդ ծախքերի տուչութիւնը մերժեց, քաղա-
քային դործոց վերաբերեալ նահանգական առեանն էլ այդ
վճիռը հաստատեց, բայց նահանգապետի պանդատուելովը
գործը մինչև Ծերակոյտին հասաւ...: Այնուհետև գործի
դրութիւնը ուր մնաց, ինձ յայտնի չէ, գոնեա լրագրներ-
ում այդ մասին մի բան չ'կար, որքան ես յիշում եմ: Ինչ-
և իցէ:

Զօրքերի երանց ներկայութիւնը մի առանձին օգուտ —
թէ բարոյական և թէ նիւթական—չունի ախալցխացիների
համար, որովհետև ստորին կարգի պինուորները, ինչպէս
յայտնի է, երանց հարկաւորած շորեղէնն ու ուտելեղէնը
աբքունիքից և կապալառուներից են ստանում, իսկ ա-
տիճանաւորները սեպհական կրպակ ունին երանց կլուբում:
Ամէն տեսակ իրեղէնները—շորեղէն և ուտելեղէն—այդ կըր-
պակը ուղղակի մնում, հեռանում, քաղաքներից է ստանում:
Այս այսպէս լինելուց յետոյ՝ շատ հասկանալի է, որ հիմք
չունի այն պարծենկոտ խօսքը թէ „հազար ատիճանաւոր-
ների ստացած ռաճկինները մեր են գնում“: Բարոյական օգտի
մասին խօսել անդամ չարժէ, երբ պինուորական ծառայող-
ները երանց կանոնի զօրութեամբ քաղաքացիների հետ մօ-
տիկ յարաբերութիւն ունենալու իրաւունք չ'ունին և եթէ
ունենան՝ մենք շատ օգուտ չենք կարող տպաւել նոցա-
նից....:

Ախալցխայի տուրսաւի վերջին ժամանակներում
հանդ առնելու պատճառներից մէկը ես, նախընթաց
նամակովս, զօրքերի հեռանալուն էի վերագրում: Կարդա-
լով այս նամակս ընթերցողը դուցէ զարմանքի մէջ հակա-
սութիւն գտնէ, բայց նա կ'սխալուի, որովհետև ա.) պա-
տերազմի և խաղաղութեան ժամանակ զօրքի արած ծախսը
միևնոյնը չէ, և բ.) հեռացող զօրքերի մեծ մասը ձիաւոր
կօզակներ էին, որոց մի գունդն մսլաածը, արած առևտուրը,
5—6 հեռեակ գունդ միասին չի անիլ: Կօզակները երանց
պահպանելը երանք էին պատրաստում, ձիերը երանք զար-
մանում, իսկ արքունիքից առ ձեռն վող էին ստանում:
Երկու տեսակ զօրքերի մէջ, առևտուր անելու վերաբերու-
թեամբ, մեծ զանազանութիւն կայ:

գ) Տեղական ստռկիանաբանի պահպանութեան համար
Ախալցխան երբաքանչիւր տարի վճարում է աբքունի գան-
ձարանին 4700 րուբլի, որից՝ մեր ստռկիանաբանի վերայ
գործ է ածում մինչայն 3200 ր. մնացեալ 1500 ր. գու-
մարը ուրիշ քաղաքների (կարճեմ Թելաւին ու Սղնաղին)
ստռկիանաբաններին նպաստ է յատկացուած: Մինչ-
դեռ մեր տեղական ստռկիանաբանը, մնջցոներ չունենալու
պատճառով արտասկսպէս, անձեռնհաս է երան պարապա-
կանութիւնները ճշտութեամբ և արքութեամբ կատարելու:
—Եւ այլն:

Այսպէս, պրեմն, թէ ուղղակի և թէ անուղ-
ղակի վնասով Ախալցխայի արդիւնքի մեծ, այսինքն
կէս, մասը յատկացուած է ուրիշ բաներին, իսկ քաղաքին երան
ամենաանհրաժեշտ, ուստմնական, առողջապահական պէտքերը
լրացնելու համար մնում կէսն է Թողած:—Եթէ աւելացնենք,
որ այդ մնացած կէսումն էլ քաղաքային վարչութեան ծա-
ռայողները պէտք է վարձատրուին, որ քաղաքացիների աղ-
քատութեան, կամ ուրիշ պատահարների համար
այդ կէսից էլ մեծ կամ փոքր քանակութեամբ ապառիկ և
մնում, տալիներով չէ ստացուում, վերջապէս ղեղջում է,
այն ժամանակ շատ պարզ է, որ Ախալցխան երան քաղա-
քային ինքնավարութեամբ շատ չէ կարող առաջ դնալ:—
Նոր տուրքեր աւելացնելու աղբիւր, տեղ, չկայ և մինչ քա-
ղաքային վարչութիւնը քաղաքացիներին նորանոր տուրքե-
րով պէտք է ծանրաբեռնէ, թէ եղածները, կարելի չափով,
ջնջէ:—

Այսպէս խնդրով ես չեմ ուզում համակարծիք լինել
այն մարդկանց, որոնք քաղաքային ինքնավարութեան դէմ
են և, եթէ ձեռքիցը գայ, պատրաստ են փակել այդ օջ-
տակը հիմնարկութիւնը:—Ո'չ. դա տգիտութիւն և մի ան-
շահ կնայողութիւն է այդ պարոններին կողմից: – Ախալցխայ
քաղաքային ինքնավարութեան մասին, սորանում գործողների
և եղած ու լինելիք գործունէութեան մասին ես կաշխատեմ
ուրիշ անդամ խօսել, այստեղ այսքանս եմ ասում մինչայն քա-
ղաքային ինքնավարութեան դէմ եղողներին թէ՝ մտածեցէք,
պարոններս, որ ձեր քաղաքի վերայ պարտքերը—այն էլ մի
որ և է 30—35 հազար րուբլի—բարդուած են ուրիշ այն ժա-
մանակներում, երբ դուք ինքնավարութիւն չունէիք, երբ
ձեր ծառայողներին ռաճիկ չեիք տալ և ձեր ներկայացու-
ցիչները – պետուտատները—գրեթէ դեսեատնիկի պաշտօն էին
վարում գաւառապետների մօտ:—Եթէ խելք ունիք, պինդ,
երկու ձեռքով, բռնեցէք այդ ձեր նոր և խիստ կարևոր
հիմնարկութիւնը:—Շատ քաղաքներ ցանկանում են ունե-
նալ, բայց այդ բաղդին դեռ չեն արժանացած:—Ալէքսանդ-
րօպօլը Թող ձեզ օրինակ լինի:—

ԲԱԶ

* * *

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

23 ապրիլի, 1882.

Իշխան Յօնդուխով-Կօրսակովը տեղս հասաւ ամսոյս
18-ին, կիրակի առաւօտ: Թէ ինչ ընդունելութիւն գտաւ
քաղաքի կողմից, ինչ զարդարանք և ինչ կերուխում էր
պատրաստուած նորա այցելութիւնը փառաւորելու հա-
մար,—այս ամէնը պաշտօնական թերթը կ'նկարագրէ: Բաւա-
կան է ասել, որ վոեմափայլ իշխանը իւր պարզ քնաւորութեամբ
հաղիւ թէ այսպիսի ընդունելութիւնից յամչցատարած
և այցելած ժողովուրդի բարոյական ու անտեսական կարիք-
ները անուշադիր թողնող մարդ լինէր: Ու կիրաւ, ինչ պա-
կասութիւն ունի օրինակ նկարագրել իշխանի անցուդարձ
աքած փողոցների շքեղութիւնը և զարդարանքը, երբ մի
երկու շաբաթ առաջ այդ փողոցների մի կողմից մինչ կողմը
անցնելը անհնարին էր թէ հետևակին և թէ ձիաւորին.
կառապետները ցեխի մէջ ընկղմում էին: Սա մեծերին վե-
րաբերեմանը: Ուստմնարան յաճախելու գժբաղդութիւնը
ունեցող մանուկները ցեխի մէջ չեղողելու վտանգից աղաղ
մնալու համան՝ կամ տանը պիտի մնային, կամ մշակների
մէջքով չանցկացած ուստմնարան գնային...

Ինչպէս ասացի, պ. կառավարչապետը Բագու հասաւ առաւօտը. Հայ Հասարակութիւնը մայր եկեղեցւոյ ժողովուած սպասում էր լշխանի այցելութեան: Բայց լշխանը նախապէս ցանկացել էր „Մարդասիրական Ընկերութեան“ տունը պատուել իւր այցելութեամբ և տեսնել Ընկերութեան ուսումնարանների շինութիւնները: Գիտեմ էր, որ նա քաւական տեղեկութիւն էր ունեցած Ընկերութեան մասին և քաւականին մեծ համարում:

Չ'գիտեմ, լշխանը հաստատ մնաց արդեօք իւր գաղափարին մէջ. գոնէ արդեօք մի քան մեր ընկերութեան տունը այցելելու ժամանակ, որ վկայէը բազուցիների մեծագործութեանը ու հարստութեանը՝ ինչպէս որ անտեղի հռչակված է այլազգաց մօտ: Իշխանը բոլոր բարձրաստիճան այլազգիների աջակցութեամբ ակն յանդիման տեսաւ, թէ ինչպէս գահլիճի մեծ դռան մի փեղկը առանց քննց կոտրված՝ ազատ, բայց սպառնալի կերպով ճօճում էր, թէ ինչպէս լուսամուտների փեղկերը փոխանակ ողուկի՝ նահապետական ոսկորութեամբ քարերով էին վակված—բռնված. նա տեսաւ թէ ինչպէս շատ տեղ պատերի սվաղը թափթփած և ինչպէս սենեակները անձրևների ժամանակ կաթում են և պատերը սևացնում. և թէ ինչպէս գահլիճի պատերին վակցրած թղթաշերտերը (обои) պատռտված ու փշացած էին: Մի խօսքով նա տեսաւ մի շինութիւն, որ աւելի աւերակի, լքեալ քարվանսարայի էր նման, քան թէ մի տան, որն տէրջ կամ վայելողն պատուաճանաչութեան կամ նիւթական կարողութեան կամ վերջապէս վայելուած հոչակին էր արժանի.....

Ուրեմն տեսնում էք, որ միմիայն Թիֆլիսը չէը՝ որ պիտի պետինը մտնէը ամօթից երկրի կառավարչապետի կողմից մեր անկախ եկեղեցւոյ ներկայացուցչին տուած վախտադրձ այցելութեան ժամանակ ազգի պատուին արժանի մի առաջնորդարան չը լինելուն համար:

Դէցուք թէ Թիֆլիսի հայ հասարակութիւնը պարտաւոր չէ (?) մի վայելուչ առաջնորդարան ունենալ. բայց Բագուն կարող է ասել այդ քանը:

Նախ որ Բագուայ կամ Շամախու թեմը անարդիւնք և աղքատ վիճակ է. երկրորդ Բագուն, կամ որ միևնոյն է՝ Մարդասիրական Ընկերութիւնը ոչ միայն պարտաւոր է ազգային պատիւը պահպանելու համար մի վայելուչ ազգային տուն ունենալ զանազան դէպքերի և կարևորութեան համար, նա իրաւասնապէս և պարտական է բարձրագոյն հոգևոր կառավարութեան առաջ մի վայելուչ և տեղաւորող առանձին բնակարան ունենալ որպէս ցաջորդարան: Եթէ նա Գէորգ IV. կաթողիկոսն առանձնաշնորհութիւնը ստանալով՝ քաղաքի ամենաակնառոր տեղում եկեղեցական Թանկագին գետնի ազատ կտորն վերայ շինել է և իւր շինութիւնը զրկելով ծխական հոգաբարձութիւնը մեծ արդիւնքից՝ սորա համար նա պարտական էր այդ շինութեան մի մասը յատկացնել մի վայելուչ և միշտ արձակ ցաջորդարանի տեղաւորութեան, որ հարկաւոր դէպքերն հոգևոր իշխանութեան պիտոյից ծառայէ: Ի հարկէ այս կարևորութիւնը մի մեծ նշանակութիւն չէը կարող ունենալ, որ ցաջորդարանը միշտ ազատ պահուի, բայց բանն այն է, որ ունենալով մի այսպիսի ցաջորդարանի անունով նշանակված մի վայելուչ շէնքուշնորհքով կարգաւորուած մի ցարկ „Մարդասիրական Ընկերութիւնը“ նոյն իսկ ինքն կարող էր վայելել բազմատեսակ պահանջների ժամանակ:

Այս նկարագիրը թէև լինի համառօտ, բայց կաթևոր էր անելու, որովհետև մեր խօսքերը բորբոքված մարդիկ արտաքերութիւն չեն, այլ վշտացած, ցաւակցող սրտի կսկիծ. ինչի „Մարդասիրական Ընկերութիւնը“ մի արտաքին կամ նիւթական գրաւողութիւն չ'պիտի ունենայ, որ օտարներն կամ անծանօթին հրապուրէ և կապէ իւր հետ կամ բարեգործամոլութեան կամ ընկերութեան կապերով: Մենք հոգով ցանկացել ենք և ցանկանում ենք այս ընկերութեան զարգացումը: Նա իւր 17 ամեայ լռիկ մնջիկ գործունէութեամբ ազգային գաստիարակութեան սերմերը ցանել է այնպիսի տեղերը, որոնք հայն համար կորած պիտի համարվէին և մեզ նախանձախնդիր է եղել ազգային պատուաճանաչութեան: Վարդապետի համար ընկերութեան արածը տակաւին Թիֆլիսը գաղափար չ'ունի: Մեր ասածը միայն այն է, որ մեր յարգելի Ընկերութիւնը կամ իւր շինութիւնից ձեռք վեր առնէ, գնայ գիւղերը կամ եթէ կանէնում է իւր գրամական միջոցները գլխաւորապէս ծախսել Բագուայ ուսումնարանների վերայ, նա պարտաւոր է նախ և առաջ իւր շինութեան որպէս ազգային տան՝ մի վայելչութիւն տայ և իւր խնամատար գործոցներին մի պատշաճաւոր, չենք ասում հոյակապ, յարմարութիւն: Ձեռք մի շինութեան մէջ հինգ վեց բան, որ խիստ կերկուբանի համար էը նշանակված—դա մի անյարմարութիւն է, որ բացի վնասը ուրիշ օգուտ չ'ունի:

Եթէ Մարդասիրական Ընկերութեան գործողները 10 տարի առաջ՝ նեղկայ շինութեան սկսելու ժամանակ չ'հաւնեցան լսել մի քանի խելամուտ մարդկանց կարծիքը և ձեռք չ'զերին մի առանձին սեպհական հողաբաժին, որ շատ հեշտ էը, այլ կամեցան բաւականանալ եկեղեցական գետնաբաժնով, ուրեմն նոքա այժմ պարտաւոր են այդ շինութիւնը յարմարեցնել ներկայ պահանջման: Երբ որ նոքա մի յարկը շինեցին, մտադիր էին երեք դասարանով 120-ի չափ աղջիկ, տղայ կրթել, և յաջորդարան ունենալ: Այն 9 սենեակից բաղկացած մի շինութիւն չերբաւ որ կը բաւէը այս կարեւորութեան: Այժմ նոյն իսկ այդ յարկի մէջ՝ առանց ընդարձակելու գտնվում է 6 դասարան 160 տղայոց և 70 օրիորդաց համար բնակարան վարժուհու, աղախնի, ծառայի համար, ընթերցարան, բնակարան Երուսաղէմայ նուիրակի համար և վերջապէս բժշկական դահլիճ. է հարկէ այսքան ծառայութիւն կատարող մի շինութիւն երկաթից ևս լինէը աւերակի կամ կարվանսարայի բնաւորութիւն պիտի ունենար:

Ընկերութեան անտեղի խնայողութիւնը այս գործի մէջ իւր շինութիւնը ամէն տարի կ ա ր կ ա տ ու մ է Տրխիկինի վերաբերի նման և չէ հանդուրժում կարևոր չարմարութեան:

Մեր կարծիքով ընկերութեան համար այս դժուարութիւնից ազատուելու մի ուղիղ ճանապարհ կայ, որի մասին միւս նամակով:

Սեբեւեբիմ:

8. Գ. Այս րոպէիս տեղեկացայ, որ տեղւոյս Թաղիեվ անունով մեր ընտիր քաղաքացիներից մի մահմետական, որ Սարգսեան եղբարց վաճառատան ընկերն է, ձեռնարկել է մի ընդարձակ Թատրոնի շինութեան, որի մասին անձամբ Դունդուկով—Կորսակով իշխանը իւր շնորհակալութիւնը յայտնած է: Բայց գլխաւոր նշանակութիւնը այն է այս գործի՝ որ պատվելի Հաճի-Զէյնալ Թազիեվը շինելով իւր Թատրոնը և տեղւոյս ռուս Թատերախմբի գլխաւորին վարձու տալով անհրաժեշտ պայման է դնում, որ վարձողը տարին երեք անգամ պարտաւորի առանց վարձի Թատրոնը իւր բոլոր պարագաներով տալ մեր սիրողներին չօգուտ Մարդասիրական Ընկերութեան ներկայացումն տալու: Թազիեվը, ինչպէս ասացի, մեր սակաւաթիւ ընտիր քաղաքացիներից մինն

է, բայց մարգասիրական գործերում, առանց խտրութեան ազգի կամ կրօնի առաջինը և ամենաառատաձեռն է: Ես պատիւ ունեցայ անձամբ շնորհաւորելու նորան:

Նոյնը:

* * *

„Մասիս"ի մէջ վերջին ժամանակներում տպուած են մի շարք նամակներ Հայ—բողոքականներին, որոնցից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները:

1) Զմիւռնիայի մէջ, ուր Հայ բողոքական եկեղեցին հիմնուել է տակաւին 1853 թուին, մինչև այսօր Հայութիւնից բողոքականութիւն գաղնող եղած են միայն երկու անձինք, մի ժամագործ արհեստաւոր Հարության եղբայրները: Կ'աւելացնենք, որ Զմիւռնիոյ Հայք առհասարակ պարծենում են իրանց Հայասասամութեամբ ամենայն իրաւամբ: Սակայն մխիթարեանները վերջը լինչ աւելի յաջողութիւն են գտած Զմիւռնիայից վերջը լինչ Հեդու Մանիսա անուանով աննշան քաղաքում, ուր վերջին 12 տարուայ մէջ բողոքականութեան դաւանած են Հայերից 3 անձը և յոյներից 6 ընտանիք: Այժմ Մանիսա բնակուող բարոզիչները և նոցա պարագլուխ միստր Պօյնդը տեղեկացուել են Զմիւռնիայ և այստեղ շինել են մի աղօթատուն մօտ 5000 ռակի ծախսերով, իսկ նոցա համար մի տուն մօտ 3,000 ռակի արժողութեամբ և ուսումնարանները տղայոց և աղջկանց համար—վերջինների յաջողութիւնը դեռ յայտնի չէ:

2) „Մէշրնեղի Հերալտ" ամերիկական լրագրի խօսքով „Պօրտ" ընկերութեան Հաշուից ամերիկացի մխիթարեան եղել 1831 թուին Թիւրքիայի մէջ (գլխաւորապէս Հայոց մէջ) „Աստուծոյ գործը յառաջ տանելու" համար ծախսած են 257,907 թալէր գրամ:

* * *

Բազում գրում են „Նեդելիա" լրագրին. Հազիւ լեհ Ռուսաստանում մի տեղ գտնուի, ուր այնքան յափշտակութիւններ լինին քաղաքացին Հողերի, ինչպէս մեր տերեանեան քաղաքում: Քաղաքը միանգամայն մեծացաւ քաղաքացին խլած Հողերով: Մարտի վերջին մի դէպք պատահեց, որ ցոյց է տալիս, թէ ո՛ր աստիճանի է Հասնում յափշտակողների վատահութիւնը: Քաղաքացին վաղուց նեղութեան մէջ լսում մահմեդականները, հետները ունենալով մի պարկ պինդ նիւթերով լցուած: Երբ պարկի բերանը բացուեցին, տեսան որ մէջը լիքն է մարդու ոսկորներով: Այն Հարցրին, թէ ինչ է նշանակում այս տարօրինակ արարմունքը, մահմեդականները պատասխանեցին, թէ Բազդասար Նապեդալով անունով մի մարդ, պահեստի շինութիւն կառուցանելով քաղաքիս Չեմբերլէնգ արուարձանում, փորել է նոցա հայերի գերեզմանները: Վախութեան համքողջ կազմութիւնը, քաղաքացին Ճարտարապետի և մի քանի ձեռնհասների հետ, գնաց գտնելու մահմեդականների ցոյց տուած տեղը և Հանդուգնեցաւ, որ չինուած Նապեդալովը գրաւել էր գերեզմանատան մի մասը և սկսել էր շինութիւն ձգել գերեզմանոցում: Ինչպէս պահեստը, նոյնպէս և նորան կից շինութիւնը, նոյն իսկ Նապեդալովի ասելով, շինուած են եղել առանց մակարդակի և թոյլտուութեան: Շինութիւնը կատարած է քանդած գերեզմանների վերայ, և նորա շուրջը կիսած է գերեզմանների Հողը, երբ մարդու ոսկորներով

* * *

Journal des Débats լրագրի Կ. Պոլսի թղթակիցը խօսելով այն յանձնաժողովի մասին, որ նշանակուած է նահանգների մէջ վերանորոգութիւնները մտցնելու, ասում է հետևեալը.

«Ասիական նահանգների վարչական վերանորոգութիւնների հարցը նորից հերթակալ է դարձել: Դա մի առանձին ձև է հայկական խնդրի պաշտպանների բերանը կողպելու համար: Ամէն անգամ, երբ այն խրոխտ Հայաստանը նորանոր չարագործութեանց է ենթարկւում և Անգլիայի դեսպանը յօգուտ նորա բարձրացնում է իւր ձայնը, նորան պատասխանում են. «Փոքր ինչ սպասեցէք, խնդրում ենք. մեր բարձր խնամատարութիւնը լոկ հայերով չէ կարող սահմանափակուել. Արաբները, Ասորիները, Լազերը հաւասար չափով են գրաւեցնում մեզ: Մենք ցանկանում ենք ստեղծել ամէնքի երջանկութիւնը, առանց արտօնութեան, ինչպէս և առանց բացառութեան. և այդ իսկ պատճառով մենք զբաղուած ենք բոլոր ասիական նահանգների վարչական վերանորոգութիւններով անխտիր:»

Ահա այս սիստեմը տարիներ է շարունակվում, և եթէ տեղական թերթերին հաւատ ընծայենք, պալատում խորհուրդներ են գումարվում այս խնդրին մի Հայրական վճիռ տալու: Սակայն պատահում են ընդհատումներ. երբ օտար պետութիւնները լուռ են, տաճկական տերութիւնը բոլորովին խաղաղ է, ոչինչ չէ անում. ընդհակառակը նա կեանքի նշոյլներ է ցոյց տալիս, երբ յիշեալ պետութիւնների բողոքները նորից տեղի են ունենում:

* * *

Է. Այվազեանի բազմաթիւ աշակերտների խնդրանօք հրատարակում ենք այն ճառը, որ պ. բժ. Կ. Մելիք-Բեգլարեանը արտասանեց տալերի 25-ին Հանգուցեալ արքեպիսկոպոսի գերեզմանի վերայ:

Որքան Համեստ և պարզ է այսօրուայ այս Հանդէսը, որքա Հակառակ այնքան մեծ պէտք է լինի մեր որոնք բերկրանքը, այնքան անպատմելի պէտք է լինի մեր Հոգւոյ ուրախութիւնը, այնքան, ասում եմ, պիտի Հրճուէին և ցընծային սիրտ և Հոգի ամէն մի մարդու, որոյ երակներով մէջ Հայի արիւնն է Հոսում, որոյ որոնի մէջ Հայ անունն է գրոշմուած, վասն զի այսօր այս Համեստ Հանդէսով Հայը արտայայտում է այն յատկութիւնը, որը բարոյական յատկութիւններից ամէնագլխաւորն է և որը վսեմացնում է, գերազանցում է մարդուս ամբողջ մարդկութեան առաջ, այն է երախտադիտութիւն: Բայց մի է նա և մի է նա, որին մենք ցանկանում ենք յայտնել մեր սրտի անկեղծ զգացմունքը. նա է որբազան արքեպիսկոպոս Գաբրիել Այվազեանը, որոյ մարմինը երկու տարիէ ի վեր ամփոփուած է այս ոտը գերեզմանի մէջ, նոյն Հոգին Ամենաբարձրելոյն գահին առաջն է: նոյն գնչ արդեօք մի Հայազգի, որ չգիտեայ թէ ով է այդ մարդը, որուն ծանօթ չլինի Գաբրիել Այվազեանի անունը: Վենետիկն մինչև էջմիածին և Պետերբուրգն մինչև Ղրիմու թերակղզին այս աշխարհն ամբողջութիւնը այսպիսիկ է եղել նորա անխոնջ գործունեութեան երբէք պետականի, մատենագրի, հայրենասիրի և

դաստիարակչի։ Ներկայ դարուս ամենաերևելի գիտութեանց Ճեմարանը պարծանք կը համարէր իւր համար ունենալ նորան և թէև իւր անդամոց, եւ Եւրոպիոյ հռչակաւոր գիտնականներէն կամարի մէջ նորա անունը փայլուն աստղի պէս կարող էր շողշողալ. բայց նա կամաւ հրաժարուել էր այդ ակնաղանութենէն, որովհետև սիրում էր իւր ազգը. այո, նա անկեղծ սիրով սիրում էր իւր ազգը և միայն նորան զոհեց իւր տաղանդը, իւր գիտութիւնը, իւր կեանքը։ Նա լաւ հասկացել և ճանաչել էր այն երջանկութիւնը, որ հայ ազգը կորցրել է բոլորը, անհետացել են նորա անցեալի չքնաղ-ները և միայն եւք այս անմխիթարական և աննախանձելի դրութիւնից մնացել է հայի համար ուսումը, լուսաւորու-թիւնը։ Սորա համար եւ նա իւր գիտութիւնը, հանդուտ-թիւնը, երիտասարդութիւնը նուիրում է հայ պատանեկաց և մինչև իւր վերջին շունչը հաւատարիմ է մնում այդ նուիրման. Ռաֆայէլեան վարժարան և Վենետիկ, Մուրա-դեան և Հայկազեան ուսումնարանները և Փարիզ, Խալիպեան ուսումնարանն և Թէոդոսիայ, Գէորգեան Ճեմարան չէջմէիածին, Ներսիսեան-Պզոյ և Յովհաննեան-Մարիամեան ուսումնարան և Տփղիս, ասքա բոլորն էլ սերտ կապ ունեն Գաբրիել սրբա-զանի անուան հետ, ոչքա բոլորն էլ նորա դաստիարակչու-թեան արտադրէզ եղած են, ամենք նորանից ծնունդ առ-նելով և ամենք նորա մանուկկութիւնը, աջակցութիւնը և հովանաւորութիւնը տառնալով. սորա մէջ Այվազեանը թա-փանցել է, ներշնչել է իւր լսողների թարմ ու մատղաշ ու-զեղների ու սրտերի մէջ ուսանց Ճշմարտութիւնը, լուսա-սորութեան կարևորութիւնը և ազգային սէրն ու հոգին։ Միևնոյն ժամանակ նա հասկացել էր, որ անհրաժեշտ է աշխատել և նորա համար, որոնք պատեհ չեն ունեցել լսել նորա ազգու խօսքը այդ գիտութեանց տաճարների մէջ, դորա Ճամար նա ձեռնարկել է մի ուրիշ դործունէութեան— պատըեզակաև Հրատարակութեան. „Բազմավէպ Վենետկոյ“, „Մասեաց Աղաւնի Փարիզու“, „Մասեաց Աղաւնի Թէոդոսիոյ“, „Լասրանները Թէոդոսիոյ“, ահա նորա լուսաբանական գործունէու-թեան պատուղները։ Իւր մատաղ ոյժերն ևս չէ խնայել Հանդուցեալ սրբազան Այվազեանը իւր համազգայիններին. Օսմանեան պատմութիւն, Ռուսաց պատմութիւն, Նախակըր-թանք դաստակերք, Քրիստոնէական, Առակք Կռիլովի, (Թարգմ). Յանուն յաղագս պատկին և Ժողովոյ նորա (Թարգմ.), Տնա-յին բժշկական մատենամատրոյութիւն (Թարգմ.), Հնդար և մի առ առաւոտ բանք, Օրէնք վայելուչ կենցաղավարութեան, Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին, Եօթն խօսք առ Տղայս, Ուղղագրութիւն լեզուիս Հայոց, Խնդարմունք Հայ-կաբանութեան, ահա նորա մատուռական զարգացման և տաղանդի արգասիքը. և ով գիտէ քանի քանի ձեռա-գիրները են մնացել դեռ տիպ չ'տեսած. բայց ինչու միառմի թուում եմ այստեղ նորա գրածները, ով չ'գիտէ, որ եթէ ունեցել ենք նրանք հինգերորդ դարում, ունեցել ենք և Գաբրիել տատենիներորդ դարում. ով չ'գիտէ, որ եթէ Սա-հակ և Մեսրոպ ունեցել են իրանց արժանաւոր աշակերտ-ները, Այվազեանն էլ ունեցել է իւր Ղևոնդ Ալիշանը, Խորէն Նար-Բէյը և Պետրոսիկն, սորա էլ նորա աշակերտներն են եղել, սորա էլ նորա առանձին Հայաստանեաց պատուղ-ներն են, մեզ չեմ Համարձակիլ այստեղ բառ մի անգամ արտասանել Գաբրիել սրբազանի վերաբերմամբ, իբրև հո-գևորականի վերայ, այդ Թող վկայէ իւր սրտի խորքերում ամեն մի Հոգևորական։ Այո, եղբարք, վաղ, խիստ վաղ կոր-ցրինք մենք սորան և այսօր ցաւ ի սիրտ առած պգում ենք մենք այդ կորուստը. Քրիստ է մնում մեզ անել, եթէ ոչ իրե-մեանդ սրտով և աղերսով մաղթել առ Ամենակալողն Աս-

բարիչ տալ Հանգստութիւն և արքայութիւն սորա Հոգւոյն և վարձ այն ամենայն տառապանաց և աշխատանաց, որ սա կրեց այս անցաւոր աշխարհիս վերայ իւր սիրե-ցեալ ազգի Համար. իսկ մեզ չնորհել շատ և շատ Այվա-զեաններ միշտ և Հանապազ։ Միևնոյն ժամանակ չմոռա-նանք կատարել մեր մի սրբազան պարտք, որը դնում է մեզ վերայ բարոյականութիւնը, այն է չմոռացնել տալ սորա անունը մեր սերունդն առաջ և յաւերժացնել սորա քաղցը յիշատակը։ Բայց անցան դնացին կոթողների և արձանների դարերը, մանաւանդ մի այնպիսի խեղճ ազգի Համար, ինչ-պէս մերը, ուրեմն անմահացնենք սորա յիշատակը մի ու-րիշ կերպով, աւելի Համեստ և աւելի օգտակար կերպով. այն է հիմնել սորա անուան թոշակ մի Հայ ուսումնարան նում է պատիւ և է յիշատակ Հանգուցեալ Այվազեանի և է քաջալերութիւն մեր ազգային գործողաց. սոյն գործին իսկ ազգին ձեռնարկած են Խալիպեան ուսումնարանի աշակերտ-ներին ոմանք և ամենքը կարող են մասնակցել այդ բարե-նպատակ գործին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱ.

Սոֆիայից «Օդեսկի Վեստնիկ»-ին Հաղորդում են Հետևեալը, որ ճիշդ նկարագրումն իրերի դրութիւնը Բոլգարիայում։

Այստեղ առհասարակ մարքերի յուզմունքը քանի գնում է, աւելի ու աւելի սաստկանում է, կարծես թէ օդը լի է երկպառակութեան տարրերով։ Ամեն տեղից զանազան տխուր լուրեր են գալիս ժողովրդի ընդհարում-ների մասին ոստիկանութեան Հետ. մի տեղ մի ռուս աս-տիճանաւոր մինչև անգամ վիրաւորել է մի բոլգարացու, առանց մի որևէ յարգելի պատճառի—պարզ, սաստիկ պաշտօնակատարութեան եռանդից։ Ազատամիտ մարդուն այժմ անկարելի է անվտանգ շրջել երեկոյեանները մայրա-քաղաքի փողոցներում, որովհետև սպասելի է որ կարող է կամ վարձկան ղարադաղցին իւր դաշոյնը ցցէ փորդ, կամ ծպտեալ ժանդարմը փայտով գլուխդ չախչախէ։ ամեն մարդ, որ չէ ուզում իւր պաշտօնը և իւր անձը վտանգի մէջ ձգել, չէ խառնվում քաղաքականութեան մէջ և ցոյց է տալիս իրան իբրև համամիտ և գոհ իրերի ներ-կայ դրութիւնից։

Սորանից երեք օր առաջ, մայրաքաղաքի նոր քա-ղաքապետը, երևի, իրաւացի և Համոզիչ պատճառներ չկարողանալով առաջ բերել ազատամիտ, բժիշկ Շիշմա-նովի հետ ունեցած ընկերական վիճաբանութեան ժամա-նակ, մի քանի ապտակներ է տալիս իւր հակառակորդին։ բայց, սորա փոխարէն, ինքն էլ նետվում է գետինը և փառաւոր կերպով ծեծվում։ Ապրիլի 5-ին, նոյն իսկ Շիշմանովի տանը լինում է ազատամիտների մեծ ժողով։ Սորա տան առաջ կանգնած է լինում «բոլգա-

բեան իլլիւստրասիոն» կոչված ամսագրի հրատարակողի կառքը և ամբողջ ժամանակ կառապանը պարտաւորված է լինում ամենայն տեսակ յարձակմունքները կրել ժանդարմի կողմից նորա համար, որ իբրև թէ այնպէս չէ կանգնած, ինչպէս ինքն է հրամայում։ Մի քանի ժամանակից յետոյ տանից դուրս է գալիս Կովաչեվը, նստում է կառքը և սպասում է այն երկու պարոններին, որոնց նա հրաւիրել էր ի միասին երթալ։ Ժանդարմը, ինչպէս երևում է, իւր գլխաւորից խրատած, այս միջոցը յարմար է համարում Կովաչեվի հետ կռվելու և բանը այնտեղ է հասնում, որ ժանդարմը, փոխանակ Կովաչեվին վերարկուից բռնած վայր գցելու, մի քանի ապտակներ է ստանում և ինքն է նոր շարժվող կառքից դէպի վայր նետվում։ Ո՛մը յայտնի չէն այս ռամիկներից բաղկացած ոստիկանութեան լիրբ յանդգնութիւնը և պատուասիրութիւնը։ Այս, ըստ երևութին, չնչին դէպքը չէ վերջանում սորանով, այլ շարունակվում է։ Կէս գիշերին գալիս է Կովաչեվի տունը ժանդարմների գլխաւորը, ռուսաց աստիճանաւոր Տիգերշտետը, իւր հետ բերելով բազմաթիւ զինուորներ, նորան կալանաւորելու նպատակով (գէթ ժանդարմները ռուսներ չը լինէին օտար երկրում)։ Չ՛գիտեմ երկիւղից, թէ զինուորական կարգապահութիւնը այդպէս էր պահանջում, ժանդարմները հանած ատրճանակներով ներս են մըտնում Կովաչեվի տունը, որտեղ լինում են երեք թէ չորս հիւր և «չ՛պաշտպանել նորան» աղաղակներով սպառնում են հիւրերին և ձեռբակալում տանտիրոջը։ Ժանդարմներից մէկը իւր քնքոյշ ձեռքերը կոխում է Կովաչեվի բերանը, բայց սորանով խաղաղութիւնը չէ վերականգնում, որովհետև Կովաչեվի վեց որդիքը և կինը բաւական աղմուկ են հանում երկիւղից, սորան օգնում են և սեղանից վայր ընկնող ամանները։

Կովաչեվին նստեցնում են ոստիկանութեան մի հոտած խուցի մէջ։ Նորա կինը իսկոյն գնում է իշխանի մօտ, բայց նորան ընդունում է ոչ թէ ինքն իշխանը, այլ նորա թիկնապահ Պոլզիկովը, որ ժանդարմի կողմն է բռնում։ Այս այցելութեան պատճառով իշխանը միւս օրը կանչում է իւր մօտ Կովաչեվի փեսային, որ մեծ յարգանք է վայելում քաղաքի մէջ. նոցա միջի խօսակցութիւնից երևում է, թէ ո՛ր աստիճան մոլորեցնում են իշխանին նորա շրջակայ մարդիքը. որովհետև նա մինչև այսօր մնում է այն համոզմամբ, թէ Կովաչեվի ձեռբակալութիւնից առաջ ոստիկանութիւնից ուղարկուած են եղել երկու հրաւիրաթուղթ, բայց նա չ՛նայելով սորան այնուամենայնիւ չէ երևացել։ Բացի սորանից, իշխանին հաւատացրել են, որ ժանդարմին այնքան ծեծել են, որ իբրև թէ հիւանդանոցում պառկած է, այն ինչ, ուղիղը այն է, որ նա ոչ հիւանդանոցումն է պառկած, ոչ էլ տանը, այլ հանգիստ ու համարձակ ման է գալիս քաղաքում։ Կովաչեվը մի յայտնի գումար, իբրև գրաւական, ներկայացնելուց յետոյ, արձակուած է, և գործը յանձնուած դատաստանին։ Նմանապէս քժիշկ Շիշմանովը դատաստանի է ենթարկուած և պէտք է նոյնպէս գրաւական ներկայացնէ իրան բանտից ազատ պահելու համար»։

ՓԷԼԻԷՏՕՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

(Presse լրագրից)

Հին Եւրոպայի և երիտասարդ Ամերիկայի տերութիւնների և հասարակութիւնների մէջ եղած զանազանութիւնը շատ և բազմազան է, ինչպէս նոցա կազմակերպութեան, նոյնպէս և աշխատանքի և գործունէութեան նկատմամբ։ Մի իրողութիւն, որ ամէն մի եւրոպացու ուշադրութիւնը գրաւում է, այն է, որ Ատլանտեան ովկիանոսի և Միսսիսիպիի մէջ գտնուած արևելեան նահանգներում ամերիկացի ժողովուրդը համեմատաբար աւելի բարձր կրթութիւն ունի, քան թէ եւրոպացին։ Այդ ուրախալի երևոյթի էական պատճառը բնականաբար պէտք է վերագրել նոցա վերին աստիճանի լաւ կազմակերպուած ժողովրդական դպրոցներին (public chools). բայց եւրոպական դպրոցներն էլ, ինչպէս իրանց կազմակերպութեամբ, նոյնպէս և իրանց գործունէութեան չափով, համարձակ կարող են մրցել ամերիկականների հետ։ Սակայն եթէ, չնայելով դորան, Ամերիկայի արհեստաւոր և մշակ դասը ընդհանուր զարգացմամբ աւելի բարձր է կանգնած, քան թէ մի որև է տեղ Եւրոպայում, դորա պատճառը միայն ուսումնարանի մէջ չպէտք է փնտրել։ Դորա պատճառը այն չափազանց կարևոր հանգամանքն է, որ Միացեալ-Նահանգների ժողովուրդը անհամեմատ ընդարձակ չափով միջոց ունի ինքնուրոյնաբար իւր կրթութիւնը լրացնելու, իւր հմտութիւնների պաշարը սեպհական ոյժերով շատացնելու և իւր հայեցողութիւնների շրջանը ընդլայնելու։

Այդ նպատակին ծառայում են հասարակաց գրադարանները (public library)։ Ժողովրդական և հասարակաց գրադարանների մէջ եղած տարբերութիւնը հետեւեալ կերպով է բացատրում Վիլիամ Պուլը, Զիկագոյի հասարակաց գրադարանի գրադարանապետը. «Կոնգրէսի (Ամերիկայի) գրադարանը, Աթէնէումինը Բօստոնում, Astor library Նիւ-Եօրքում և այլն, ընդհանուր մըտքով առած, հասարակաց գրադարաններ են, սակայն սոքա չեն պատկանում իսկապէս այն տեսակներին, որոնք այդ անունով հասկացվում են։ Կոնգրէսի գրադարանից օգուտ կարող են քաղել միմիայն սենատորները, պատ-

գամաւորները և մեծամեծ պաշտօնեաները և միայն, քաղաքավարութիւնից ստիպուած, թոյլ են տալիս հասարակութեանը գրքեր կարդալ միայն ընթերցանութեան սենեակում։ Բօստօնի Ա֊թենէումը մի փակ ընկերութիւն է, որի գրադարանից կարող են օգտուել նորա անդամները կամ նոցա միջնորդութեամբ մուտ գտնողները։ Աստորի մատենադարանը ամէնին մատչելի է, բայց հիմնուած է և պահվում է մասնաւոր մարդու ձեռքով. հասարակութիւնը ոչ նորա պահպանութեան համար է նպաստ տալիս և ոչ էլ այնտեղ ձայն ունի։ Եւրոպայում գանազան արքունիք, համալսարաններ, վանքեր, քաղաքներ շատ դարեր առաջ ունեցած են և ունին մինչև այժմ հասարակաց մատենադարաններ, բայց նոքա ամէնքը գրքերի ժողովածուներ են գիտնականների և ոչ թէ ամբոխի համար։ Համբուրգի մատենադարանում, օրինակ որ (1539 թուին վանքի գրքերից հիմք ստացաւ) 1869 թուին արդէն 190,000 հատոր գիրք կար և 5000 ձեռագիր, բայց նոյն տարին միայն 4 հազար գիրք այնտեղից վերցրած էին կարդալու։ Ֆրանկֆուրթ Մայնի վերայ քաղաքի մատենադարանը 84,000 հատոր գրքից միայն երկու հազարը բան տուեց կարդալու և Լայբցիգինը 113,000 հատորից միմիայն հազար հինգ հարիւր։ Ուրեմն պարզ է, որ այդ գրադարանները ժողովրդի մեծամասնութեանը անօգուտ են։ Մեր ասած ժողովրդական կամ հասարակաց գրադարանը պէտք է որ մի գանձ լինի ամէնի համար և ոչ թէ կրթուածների կամ մինչև անգամ միայն գիտնականների համար։ Սրհեստաւորը, մշակը, կար անող աղջիկը, փոքրիկ գործակատարը և առհասարակ ամէն մինը, ինչ կարդի, կրթութեան կամ դերքի տէր որ լինի, պէտք է մի կարդալու բան ստանայ, երբ որ նա կարդալ է ցանկանում։ Ժողովրդական գրադարանը ժողովրդական ուսումնարանի շարունակութիւնը և լրումն պէտք է լինի, որովհետև երկուսն էլ միևնոյն սկզբունքի վերայ են հիմնուած,—որ ուսումը և կրթութիւնը ընդհանուր բարօրութիւն առաջացնող միջոցներից ամէնից զօրաւորներն են, և որ քաղաքական տնտեսութեան տեսակէտից՝ աւելի լաւ է մի ժողովրդին կրթութիւն տալ, քան թէ բանտեր և բարքը ուղղելու տներ։

Արդէն երեսուն տարի կը լինի, որ այդ տեսակ գրադարաններից առաջինը հաստատուեցաւ, և որին մի ամերիկացի հեղինակ իրաւամբ ժողովրդական ուսումնարան անունը տուեց։ Այդ գաղափարը Մասաչուզետում ճիշտ այն ժամանակ ծագեցաւ, երբ Անգլիայում այդ տեսակ հաստատութիւններ «fnee libraries» անունով սկսուեցան։ Այն օրից մինչև այժմ նոցա թիւը մինչև հազարների է հասել։ Լուսաւորութեան նախարարի տուած տեկուցումից մատենադարանների վերաբերութեամբ, 1876 թուի Ֆիլադելֆիայի աշխարհահանդիսի ժամանակ, երևում է, որ 1850—1875 նոցա թիւը 2240 էր։ Այդ տեկուցումը իրան մէջ վերին աստիճանի հետաքրքիր վիճակագրական տեղեկութիւններ է պարունակում, մասնաւորապէս գրադարաններ յաճախելու և գրքերի տարեկան շրջանառութեան վերաբերութեամբ։ Իրաւ է, թէև այդ վիճակագրական թուերը բոլորովին ճիշտ չեն, բայց որովհետև մեծ մատենադարանները (Հարվարդի, Եալի և այլն) այդ տեսակ տեղեկութիւններ չեն հաղորդած, պէտք է հաւանականօրէն ընդունել որ 1875 թուին, 742 գրադարաններից բան տուած 8,879,869 հատորից՝ ամենամեծ մասը ընկնում է ժողովրդական գրադարանների հաշուին։ Ցինցինատիի ժողովրդական գրադարանը, 1853-ին հիմնած, 1875 արդէն 70,000 հատոր գիրք ունէր, որը մանաւանդ իւր այժմեան գրադարանապետ Թոմաս Վիլկերի շնորհիւ մի օրինակելի հաստատութիւն է դարձել, մի տարուայ ընթացքում 51,189 հատոր գիրք էր տուել կարդալու նոյն իսկ գրադարանում և 443,100 դրսի կարդացողներուն։

Վերոյիշեալ գրադարանապետի տեղեկագրից երևում է՝ թէ այդ տեսակ գրադարաններում, բացի լրագրներից որոնք մեծ քանակութեամբ ստացվում են, գլխաւորապէս ինչ տեսակ գրքեր են կարդացվում։ Նա հաղորդում է, որ երբ ցուցակ պատրաստելու համար՝ ռոմանների և վէպերի բաժանումն մի քանի ամսով ընթերցողների համար փակվեցաւ, պատմական և կենսագրական գրքերի գործածութիւնը 137% բարձրացաւ, աշխարհագրական և ճանապարհորդութիւններին վերաբերեալ գրքերինը 191% և բնական գիտութիւնների բովանդակութեամբ 89%. բայց հէնց որ ռոմանները և վէպերը դարձեալ սկսեցին տալ, միւս գրքերի ընթերցանութիւնը անմիջապէս սովորական բարձրութեան իջաւ։ Այդ իրողութիւնից այն եզրակացութեան է գալիս, որ այդ տեսակ մի գրադարան «թեթև գրականութիւնը» և նորա գործածութիւնը հսկողութեան տակ առնելու է և նոցա թիւը սակաւեցնելու է, բայց հարկ չկայ միանգամայն վերջացնելու։ Նա ասում է, «որչափ էլ որ մեր ստորին դասակարգի ժողովրդեան՝ դէպի այդ տեսակ գրականութեան ողորմելի և վատթար արտադրութիւնները ունեցած համակրութիւնը ողբալի, այնուամենայնիւ այդ ընթերցանութիւնը ես բոլորովին վնասակար չեմ համարում։ Ես առաւել պակաս իրաւամբ կը ցանկայի այժմեան ռօմանների և այդ տեսակ գրուածների լաւ տեսակների զարգացնող և կրթիչ ներգործութիւնը միանգամայն ուրանալ, թէև յիմարութիւն կլինէր նոցանից զարգացում և հմտութիւն քաղել ցանկալը։ Բայց իրաւ որ արժէ քննել այն հարցը, թէ արդեօք այդպիսի մի հաստատութիւն, ինչպիսին որ մերն է, իւր յաճախորդների պահանջը այդ տեսակ գրուածների ընթերցանութեան լրիւ կատարելու է, թէ ոչ։ Ինձ թւումէ, որ մի ժողովրդական գրադարան, մեր ուսումնարանական սիստեմի հետ սերտ կապով կազմուած ինչպէս որ այժմ է, իրրև մի մասը մեր հասարակաց կրթութեան ընդհանուր սիս-

տէմի, իրաւամբ պիտի չանայ իւր կողմից և իւր սեփհական միջոցներով ժողովրդական կրթութեան վերայ ուղղակի ներգործել։ Ուրեմն «թեթև գրականութիւնը» թեև միանգամայն չը պիտի սակասեցնել, բայց և այնպէս շատ չափաւոր կերպով պիտի ունենալ ժողովրդեան ընթերցանութեան համար։ Եւ վերոյիշեալ Չիկագոյի ժողովրդական գրադարանի գրադարանապետ Պ. Պուլը մի յօդուածոմ, «ժողովրդական գրադարանների կազմակերպութեան և կառավարութեան» մասին, հետևեալն է ասում՝ «Մի ժողովրդական գրադարանի գլխաւոր պարտաւորութիւններից էլ մեկը պէտք լինի՝ ամեն տեսակ ընթերցողների, զանազան հասկացողութեանց տէր անձինքների համար ընթերցանելի պատրաստ գրքեր ունենալ։ Ընթերցողների ամենամեծ մասը շատ քիչ գրականական զարգացում ունի և ժողովրդական գրադարանի պարտականութիւնն է, ամբոխի ունեցած պակասաւոր կրթութիւնը լրացնել, նորան ընթերցասիրութեան վարժեցնելով։ Աւ հասարակ ժողովուրդը այնպիսի գրքեր է կարդում, որոնց բովանդակութիւնը նորա բարոյական և մտաւոր հորիզոնից բարձր է և ինչ չափով որ նորա ճաշակը և զգացմունքը աղնուանում է, նոյն չափով նա աւելի լաւ գրքեր է պահանջում։ Միւս կողմանէ յայտնի է, որ օգտակար են այն գրքերը, որոնք հասկանալով են կարդացւում։ Ուստի մի ժողովրդական գրադարան իւր յաճախողների պահանջին համապատասխանելու համար, շատ անգամ իւր պահարաններում այնպիսի գրքեր պահելու է, որոնք մի զարգացած մարդ երբէք կարդալու չէ, բայց որ մի և նոյն մարդը, իւր զարգացման սկզբնական աստիճանի վերայ գտնուած ժամանակը, ամենամեծ հրճուանօք կկարդար»։

Ժողովրդական գրադարանների տուած օգուտների մասին Պ. Քուինսին ասում է. «Սա, միւսը, երրորդը, մի ժամանակ, աշխատանքից յետոյ կերթար գինետուն, այժմ նա ժողովրդական գրադարանն է գնում կամ իւր տանը գրքեր է կարդում, որոնք այնտեղից է բան ուզել. նոյնը և աղջիկների համար կարելի է ասել։ Այս տեսակ հաստատութեանց օգուտը շատ և շատ մեծ է և բազմակողմանի, և վիճակագրական թուերով ճիշդ արտայայտել անհնարին է։ Ի՞նչպէս այդ թուերից տեսնել, թէ որքան մեծ է այն կրթուած մարդիկների թիւը, որոնք առանց այդ գրադարանների խաւարի մէջ սիրտ դեգերէին, կամ նոցա թիւը, որոնք շնորհիւ գրադարանների մատակարարած մտաւոր և հոգեկան սնունդի իրանց ստոր դրութիւնից բարձրագոյն աստիճանի վերայ են բարձրացել։ Դուցէ թէ դեռ շատ վաղ է գնահատելու՝ թէ այդ սրնունդի մատակարարութիւնը ամբոխին ինչ հրաշալի արդիւնքներ է տալի։ Մեզ յայտնորդող սերունդը պարզ պիտի տեսնէ, ինչ ճանապարհներով այս հաստատութիւնները իրանց անընդհատ ազդեցութեամբ դէպի որ նպատակներն են ղեկավարում։ Գոնէ այսքանը կարելի է յուսալ, որ իւրաքանչիւր մի ժողովրդական գրադարան իւր տեղի համար մի բարձրագոյն մտաւոր կեանքի կենդրոն է դառնալու։»

Այդ տեսակ է Միացեալ Նահանգների ժողովրդական գրադարանների էութիւնը, կազմակերպութիւնը, ազդեցութիւնը. այդ տեսակ են նոցա ապագայի մասին ունեցած յոյսերը։

Վաղուց արդէն գիտաւորութիւն ունէի ամերիկական քաղաքների այս գեղեցիկ հաստատութիւնների մասին խօսել, բայց երբէք այնպէս յարմար չէր լինիլ, ինչպէս այժմ։ Որովհետև, ինչպէս որ լրագիրներից իմանում եմ, այժմ մտադիր են Վիէննայի մի քանի թաղերում այդ տեսակ գրադարաններ հիմնել։ Դուցէ այս տողերը նպաստեն ազնիւ մարդասէրների ուշադրութիւնը դարձնելու դէպի այդ գովելի ձեռնարկութիւնը. գուցէ թէ յաջողուի և դորանով ուրիշ տեղերում ևս զարկ տալ այդ տեսակ գրադարաններ հիմնելու։ Ամերիկայում, պէտք է ասել, որ ժողովրդական գրադարաններ հիմնելը մասնաւոր բարեգործութեան չէ թողնուած, քաղաքային վարչութիւնները այդ գործը իրանց պարտականութիւնն են համարում և գրադարանների ծախսը ուղղակի իրանց հարկերի շարքումն են դնում։

(Ր-ը Օտտօ Գր...)

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ԱՂՔԱՏԱՆՈՑԸ

Ալէքսանդրապօլի քուն ժողովրդական մարդասիրական Հաստատութիւններից մինն է նորա՝ 1858 թուին նոյն իսկ ժողովրդի ձեռքով հիմնուած և մինչև այժմ գոյութիւն ունեցող հասարակական աղքատանոցը։

Անշուշտ նորա հիմնարկութեան պատմութիւնը շատ հետաքրքիր է, բայց ժողովրդի ամենատուաը մասը չ'գիտէ ոչ միայն այդ պատմութիւնը, այլ և աղքատանոցի եկամտից աղբիւրները, դրամագլուխը, գործունէութեան առաքելութիւնը, սահմանը, մինչ անգամ ոչինչ։ Նորա մինչեայն այժմեան դրութեան հետ ծանօթ է աղքատանոցի հոգաբարձութիւնը, որ բաղկացած է հասարակութեան կողմից ընտրուած չորս անձինքներից։

Ալէքսանդրապօլում կան շատ պարագաներ և հասարակական հարցեր, որոնք ունին ոչ հեռի պատմական ծագում և անցեալ և որոնց մասին քաղաքի բազմութիւնը այնուամենայնիւ գիտէ շատ քիչ կամ ոչինչ։

Ես մտադիր եմ մերթ ընդ մերթ խօսել նորանց մասին „Արձագանքի“ մէջ։

Աւ այժմ սկսում եմ Աղքատանոցից։

Աղքատանոցի հաստատութիւնը կայանում է անշարժ կալուածոց և դրամագլխի մէջ։ Անշարժ կալուածքները սոքա են.

1. Չորս աչք տուն Հողէ-Պլանում (նուէր Գիւլի Նազարէթեանի) արժողութիւնն է . . . . . 100 ր.

2. Չորս աչք տուն (նուէր այրի Հաջի Զանիկի) արժողութեամբ. . . . . 300 ր.

3. Երկու աչք տուն (նուէր այրի Գիւլի Նիկողոսեանի) արժողութեամբ . . . . . 100 ր.

4. Տան և մի աչք տուն, աղքատանոցի հաշուով գնած, արժողութեամբ . . . . . 800 ր.

Բոլորի արժողութիւնը 1,300 ր.

5. Մի ընդարձակ շինութիւն տուրք Աստուածածնին եկեղեցու մօտ, աղքատանոցի հաշուով կառուցած, որ ունի 10 կրպակ և մի նեբքնատուն:

Բացի այդ, աղքատանոցը այժմ ունի հետևեալ դրամագլուխը:

1. Պետական տոկոսաբեր թղթադրամներ . .	4550 ր.
2. Մասնաւոր մուրհակներով	347 —
3. Պատրաստի դրամ	656 —
Գումարը	5553 ր.

Աղքատանոցի սովորական մուտքը լինում է հետևեալ աղբիւրներից.

1. Պահկներից մինչև Թուով տարին	125 ր.
2. Ննջեցեալների յիշատակի համար տարին .	300 —
3. Անուանակոչութիւններից տարին	250 —
4. Եկեղեցիների տուիերից, եկեղեցիների և քաղաքի մէջ ափսէ պտտցնելուց	700 —
5. Մշտական նուիրատուութիւններից. . . .	700 —
6. Պատահական նուէրներ.	50 —
7. Տասը կրպակների և մի նեբքնատան վարձ.	544 —
8. Դրամագլխի տոկոսներ	420 —
Ընդամենը	3089 ր.

Այս հաշուից երևում է, որ վերոյիշեալ չորս տունը 1300 րուբլի արժողութեամբ ոչինչ արդիւնք չեն տալի աղքատանոցին:

Ցիշեալ եկամուտը գոյանում է մշտական և պատահական աղբիւրներից: Մշտականն է դրամագլխի տոկոսն և խանութների վարձը 864 րուբլի. իսկ պատահականն է զանազան նուիրատուութիւններ: Վերջիններըը երբեմն չատանում են և երբեմն նուազում: Այս երևոյթը նշմարելի առնելու համար գնում եմ այստեղ նոյն աղքատանոցի եկամտից եռամեայ ընդհանուր հաշիւը:

	1878		1879		1880	
	Րուբ.	Կ.	Րուբ.	Կ.	Րուբ.	Կ.
Պահկներից	232	46	173	30	122	95
Ննջեցեալների յիշատակի համար	771	5	281	60	525	40
Անուանակոչութիւններից . . .	358	50	477	95	424	70
Խանութներից և նուէրներից .	2060	80	1616	28	2248	14
Եկեղեցիների և քաղաքի ափսէներից	1043	91	1158	25	685	96
Ընդամենը	4464	27	3807	38	4047	15

Չնայելով որ պատերազմի տարիներից չեռոյ եկամտից այս առատ արդիւնքը բաւականին պակասել է, բայց վերոյիշեալ տարեկան հաշուից ընթերցողը կը տեսնի որ այժմեան եկամուտը այնուամենայնիւ կազմում է մի նշանաւոր գումար 3089 րուբլի, որի գործադրութեանը նոյնպէս հարկաւոր է ծանօթանալ:

Աղքատանոցի հոգաբարձութեան ներքոյ գտնուում են 320 հոգի մեծ և փոքր, երկու սեռից էս, բաժանուած 91 գերդաստանի, որոնցից իւրաքանչիւր գերդաստան ամսէ ամիս ստանում է մի որոշեալ գումար: Իւրաքանչիւր գերդաստան նշանաւոր տօներին, այն է զատիկին, նոր տարուն, ստանում է միանուագ առանձին գումար: Մշտական նըպաստ ստացողների վերայ աւելանում են միանուագ օժանդակութիւն առնող պատահական մուրացկանները, ըստ մեծի մասին Տաճկաստանի գաղթական հայերից:

Բացի այդ՝ աղքատանոցի հաշուով ուսանում են տեղւոյն Սահականոցեան օրիորդաց դպրոցում 12 աղջիկները, որոնց բոլորի վերայ ծախսուում է միջին թուով տարին 80 ր:

Աղքատանոցի գումարը ուրեմն ծախսուում է 1. մշտական և 2. պատահական աղքատների վերայ, 3. տառերկու որդեգրուհեաց, 4. աղքատանոցի դրագրի, 5. ծառայի և 6. վառելիքի և լուսոյ վերայ:

Աղքատանոցի ընդհանուր ծախք եղած է՝

1878	թուին	2785	րուբլի	75 կոպէկ
1879	„	2929	„	20 „
1880	„	4318	„	55 „
1881	„	2458	„	„ „

Այժմ տեսնենք, թէ բոլոր 320 մշտական աղքատներից քանիսը որքան տարիք ունին և ինչ սեռին են պատկանում:

			Արական	Իգական	Երկսեռ
1 տարեկանից մինչև	5	տարեկանը . . .	19	18	37
5 „ „	10	„ . . .	33	32	65
10 „ „	15	„ . . .	24	36	60
15 „ „	20	„ . . .	7	13	20
20 „ „	25	„ . . .	2	3	5
25 „ „	30	„ . . .	„	6	6
30 „ „	35	„ . . .	1	14	15
35 „ „	40	„ . . .	5	15	20
40 „ „	45	„ . . .	2	14	16
45 „ „	50	„ . . .	6	13	19
50 „ „	55	„ . . .	2	10	12
55 „ „	60	„ . . .	1	2	3
60 „ „	65	„ . . .	1	7	8
65 „ „	70	„ . . .	„	4	4
70 „ „	75	„ . . .	„	9	9
75 „ „	80	„ . . .	5	2	7
80 „ „	85	„ . . .	3	4	7
85 „ „	90	„ . . .	2	„	2
90 „ „	95	„ . . .	„	1	1
Տարիքը և սեռը անյայտ			—	—	4
Ընդամենը			113	203	320

Սորանց Թուումն է կոյր 12. խուլ 1. անդամալոյծ 1. խելագար 4. այրի 57 հոգի:

Եթէ ընդունենք որ աղքատանոցի տարեկան ծախքն միջին Թուով 2500 րուբլի է և այդ գումարից հանենք որդեգրուհիների, գրագրի, ծառայի վառելիքի և լուսոյ ծախսը, որ կազմում է 300 րուբլի, այն ժամանակ աղքատներին կը մնայ զուտ բաժին 2200 րուբլի: Վերջին գումարը բաժանելով 320 աղքատների վերայ, կը տեսնենք որ իւրաքանչիւրը նոցանից կը ստանայ տարին 6 րուբլի 87½ կոպէկ:

Այդ գումարը ստանում են մեծ և փոքր, երեխայ և գառամեալ, կին մարդ և այր մարդ, առողջ և տկար և այլն: Բոլոր 320 աղքատներին ես բաժանում եմ երկու մասի 1) անընդունակ որ և է գործման և 2) ընդունակ որ և է գործման: Առաջին կարգին պատկանում են մինչև 10 տարեկան երեխայքը, 50 տարեկանից վեր անձինք, երկու աչքով կոյրերը, խելագարները, անդամալոյծները և հիւանդները: Իսկ երկրորդ կարգին պատկանում են 10 տարեկանից մինչև 50 տարեկան առողջները: Առաջին կարգի անձինք Թուով 165 հոգի են, որոնք կատարեալապէս արժանի են աղքատանոցի բարիքը վայելելու. այն ինչ միւս մասը, այսինքն երկրորդ կարգին պատկանողները Թուով նոյնպէս 165 հոգի են և

գտնում են աղքատանոցն Հովհաննաւորութեան ներքոյ լոկ նորա համար, որ կրում են աղքատի անուն: Վերջիններից 49 արական են, իսկ 116 իգական: Ուրեմն 165 հոգի ոչ միայն արդիւնաբեր անձինք չեն, այլ և, միւս կողմանէ, նոցա նկատմամբ հասը լալոց են:

Յիշեալ թուանշանները կարող են յղացնել ընթերցողի մէջ զանազան մտքեր: Զորօրինակ՝ ինչ է արդեօք մեր աղքատանոցի բուն նպատակը և դէպի ո՞ւր պիտի է ձգտուի: Նպատակը որքան մարդասիրական է, այնքան էլ անորոշ է, ըստ որում եթէ 25 տարի առաջ հիմնած աղքատանոցը այսուհետև էլ՝ չարաւնակէ իւր գործունէութեան այժմեան ձևը, այն է՝ իւրաքանչիւր ամիս մատակարարել մի որոշ գումար հիւանդ և առողջ աղքատներին, դորանով, ես կարծում եմ, չի բարւոքուիլ աղքատների դրութիւնը, չի պակասիլ նորանց թիւը, գուցէ մինչև անգամ օրէ ցօր շատանայ:

Աղքատանոցը իւր բարձր նպատակին հասած չի լինիլ եթէ մի 3—4 հոգուց բաղկացած գերդաստանի ամսական 2 րուբլի չափ ընդհակառակը նա պիտի է կարելոյն չափ աշխատի պակասեցնել կարօտեալների թիւը: Վերջին ամենագլխաւոր նպատակին կը հասնի նա՝ եթէ ապագայ անչնորհներից իւր սեղանի սրբութեան համար անչնորհներ չպատրաստի:

Աղքատանոցը այս նպատակին կը հասնէր, եթէ հիմնէր թեթև արհեստանոց երկու սեռի համար ևս: Մօտ 50 տղամարդ և 116 կին մարդ իրանց ֆիզիքական ոյժը սպառում են առանց որ և է արդիւնաբերութեան: Մենք չունենք հայ կանանոցից հանդերձ կարողներ, լուացարար ուժոյղներ և այլ այսպիսի թեթև արհեստ գիտցողներ: Արհեստանոցի նշանակութիւնը և օգուտը այնքան պարզ են, որ կարօտ չեն ոչ մի բացատրութեան:

Եթէ արհեստանոց հիմնուի, աղքատանոցը կարող է ամենայն հեշտութեամբ ծածկել նորա ծախքը նախ իւր համտով և երկրորդ իւր արհեստաւորների աշխատանքով: Արհեստ սովորող աղքատները փոխանակ աղքատանոցին բեռը լինելու, կը տային նորան իրանց արհեստի արգասիքը և կը ստանային դրամ և այլն:

Եթէ այս գործը իրագործուի, աղքատանոցի եկամուտները կարող են շատանալ: Մտաբերենք որ աղքատանոցի անշարժ կալուածքը, բացի կրպակները, առ այժմ ոչ մի կոպեկ անգամ օգուտ չեն տալիս: Յայտնի բան է, աղքատանոցի արհեստանոցի վերաբերութեամբ շատ բան կարելի էր ասել, բայց այստեղ առ այժմ աւելորդ են մանրամասնութիւնները: Առաջարկում է այս անգամ մի միայն սկզբունքը:

Ս՛րը Ալէքսանդրապօլի աղքատանոցը կարող է կարգի ընկնել և արհեստանոց հիմնել: Նա այդ կէտին կը հասնի՝ եթէ

1. Կը կազմուի նորա համար մի բազմակողմանի և ընդարձակ կանոնագրութիւն Հայոց Վեհափառ Հայրապետից հաստատուած օրէնքի հիման վերայ:

2. Կ՛ընտրուի հոգաբարձութիւն բանիբուն և գործունեայ անձինքներից:

3. Կ՛ունենայ հաստատութիւնը լուրջ վերահսկողութիւն աղքատանոցի հաշիւների և գործունէութեան վերայ:

Բայց քանի աղքատանոցը կը մնայ, ինչպէս մինչև այժմ, առանց կանոնագրութեան, առանց որոշ նպատակի առանց վերահսկողութեան հաստատութեան կողմից, մենք նորանից դեռ ևս զգալի արդիւնք չենք կարող սպասել:

Ալէքսանդրապօլ 30 ապրիլ 1882 թ.

ԲՈՐԵԱՍ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

„Նեգելիա“ լրագիրը հաղորդում է հետևեալը.— Ազնիւլի գործ հոգևորական շրջանի մէջ այժմ սկըսուում է կիեվում: Յունուար վանքի վանահայր Մելխիսեդ վարդապետը երևեցաւ որ վաշխառուի մէկին է և տէր փոխատու դանձասանի, որ նա ձեռք է բերել հրէայ Գրօյնոմից: Ի հարկէ, հայր Մելխիսեդը չէր կամենալ լինքն իրան վաշխառու ցոյց տալ, ուստի և գումար ձեռք բերելով ապագայից Յունուարտանից իւր աղգական ուսանող Եւստրատիոս Վասիանելիսին, որն անուանով էլ հաստատեց գանձարանը. բայց որպէս զի ուսանողը իւր այդ դերից օգուտ չ՛քաղէ և չ՛սեպհականացնէ իրան վանահօր բարիքը, այս պատճառով նորանից վեր առան 150 հազար րուբլու պարտամուրհակ, վանահօր եղբօր անունով: Իսկ լինքը վանահայրը դարձեալ ապրում էր վանքում՝ առանդնելով այնտեղ աւետարանական առաքինութիւնները՝ անընչասիրութիւն, աղքատասիրութիւն և յիշեցնելով ունկնդիրներին հարստի երկինքի արքայութիւնը մտնելու դժուարութիւնը և թէ „ինչ օգուտ մարդուն, եթէ բոլոր աշխարհը շահուի“:— Ուսանող Վասիանելիսն էլ մինդամայն արժանի երևեցաւ իւր կոչման, նա չէ թէ միայն անչափաղ թողից ուսումը, այլ և ուսումից դանուց իւր երկու գիմնազիստ եղբայրներին որոց բնակեցրեց իւր մօտ այդ քարի և բարեյաջող բարձր՝ վոխատուութեան գործի համար: „Ես բոլորովին նուիրուած եմ իմ գործին, ասում էր լինքն իրան ուսանողը, և շատ դիշերներ եմ կատրել դորա համար“,—այնչափ գրաւիչ էր Թուում նորան տոկոսների հաշիւը, մուրհակները և խեղճ վոխառուների վերայ մնացած դրամները: Ես չանկարծ այս բոլոր ընտանեկան կապը, բոլոր այս բարեհամակամ աշխատութիւնը խանգարուեցաւ. երևեցաւ, որ այդ քաղցր ընտանիքի անդամները մէկմէկու ճնշում են: Պայմանի զօրութեամբ, ինչպէս ցոյց է տալիս պ. ուսանողը, վանահայրը արգիւնքը պիտք է նորա հետ հաւասար կիսէր, բայց իսկապէս նա այնպիսի խորամանկութիւն արաւ, որ սկսեց բոլոր վաստակը գրպանը դնել, իւր աղգականին խոստանալով լոկ ապագայում լաւութիւն անել, գուցէ նաև օրինակ բերելով նորա առաջ աւետարանից Ղազարոսի առակը, որ Թէպէտև իւր կեանքում միշտ քաղցած էր, բայց դորա փոխարէն Աբրահամի գոգին արժանացաւ, այնպէս որ հարստն անգամ նախանձում էր նորան: Փոխադարձ անբաւականութիւնները նորանով վերջացաւ, որ պ. ուսանողին դործից հեռացրին և տեղը նստեց վանահօր եղբայրը, մի բժիշկ, որ յայտնի չէ, Թէ ինչպէս ժամանակով գոհեց դրամարկղին իւր բժշկականութիւնը. այնուհետև սկսուեցան վճճեր, չանդիմանութիւնները և այս սիրուն գործը լոյս աշխարհ ընկաւ: Ուսանողը, „որ չափազանց նուիրուած էր փողի տոկոսներին“, այժմ ողբում է մանուկի մէջ, ուստի և նորան իւր խելօք եղբայրների հետ հրաժարեցրին „գիտութեանց տաճարից“ այդպիսի „ամօթալի պարապմունքի“ համար: Այս կոչումը լաւ է ցոյց տալիս չափաւորական շահախնդրի բարոյականութիւնը, իսկ եթէ աւելացնենք դորան դրամարկղի լիակատար տիրոջ եկեղեցական քարոզները աղքատասիրութեան և երկրիս վերայ գանձ չը ժողովելու մասին „սուր ուշիճն ապականում է և գողը գողանում“, այն ժամանակ փոքր ինչ աւելի զմայլելի բան կը դուրս գայ:

„Շուտով գործը կը ներկայացուի դատարանին“—հաղորդում է տեղական Թղթակիցը։

—

„Օգեսակի Վեստոկ“ լրագիրը նկարագրելով թէ ինչ զարմանալի արագութեամբ և մեծ քանակութեամբ ոսկիպատած են հրէայք գաղթել այժմ Ռուսաստանից դէպի Ամերիկայ, նկարագրում է հետևեալ իրողութիւնը։ Քիշնևում մի հարուստ հրէայ, որ տարանից առաջ 1300 րուբլի վճարելով կահ կարասիք էր առել իւր տան համար, ներկայ հանգամանքներից ստիպուած շտապեց ծախել այդ բոլորը 100 րուբլով և հեռանալ Ռուսաստանից։

—

Դարվինի ինքնակենսագրութիւնը.—Մի քանի տարի սրանից առաջ Դարվինի աշխատասիրութեանց հրատարակիչներից մէկը դիմել էր հռչակաւոր բնագէտին խնդրելով, որ հաղորդէ նորան իւր ինքնակենսագրութիւնը։ Դարվինը ուղարկեց հրատարակչին հետևեալ պերճախօս տողերը. „Իմ անունը Չարլս Դարվին է։ Ես ծնուել եմ 1809 թուին։ Ես ուսել եմ, չեմայ մի ճանապարհորդութիւն եմ արել աշխարհի շուրջը։ Այդ ժամանակից ես չեմ դադարել պարապելուց։ Ահա եմ բոլոր կեանքը։“

—

«Մեղու Հայաստանի» լրագիրը երան յատուկ ոճով պատասխանել է պ. —օ—ի «Արդեօք «Մեղուն» չէր, որ» յօդուածին. Նա չէ ընդունում որ հակասել է իրան ասելով 1876 թուին հայր Գ. Այվազեանի մասին թէ նա մի «ճիզվիթ ասպետ էր» թէ «ամենայն տեղ արմատացրել է իւր վնասակար և խարդախ ազդեցութիւնը», իսկ 1882-ին անուանելով նոյն անձը «հայ եկեղեցու և հայութեան քաջ զինուոր»։ «Մեղուն» այս վարմունքը մինչև անգամ «արդար և բնական» է համարում։ Մեզ քաջ յայտնի է այս լրագրի յամառութիւնը, որ թէև շաբաթը հազիւ երեք անգամ է լոյս տեսնում, բայց իւր ճակատին դրօշմած ունի «Հրատարակվում է ամէն օր բացի երկուշաբթի և տօն օրերից»։ Մենք առայժմ կը բաւականանանք միայն մի փոքրիկ բացատրութիւն խնդրելով «Մեղուից»։ «Սոդոմ և Գոմոր» զզուելի վէպի մասին խօսելով լրագիրը ասում է, որ մենք մոռացել ենք, թէ այդ ա ս պ ե տ ա կ ա ն վէպը քննուեցաւ ընդարձակ չրջաններում քան «Արձագանքի» խմբագրութիւնը, բայց այն մեկնութիւն չընդունեց որ տալ է ցանկանում (?!) նորան յօդուածագիրը։ Արդեօք չի՞ բարեհաճիլ «Մեղուն» յայտնել յանուանէ յիշել այն չրջանները, որտեղ Նորա «Սոդոմ Գոմորը» հաւանականութիւն ստացաւ... ո՛ գիտէ գուցէ այն ժամանակ և մեր հասարակական գործիչների դերերը փոխուին... այն ժամանակ գուցէ տեսնենք թէ ով ումմ շահերին ծառայեց....

Մոռացանք ասել, որ «Մեղուն» յիշողներով և տարաբնակարկութիւններով չէ շատանում, այլ աշխատում է սրամիտ լինել, օ տառը զրօ կոչելով։ Սակայն թող գիտենայ «Մեղուի» խմբագիրը այն ճշմարտութիւնը, որ զրօն աւելի է քան մի բացասական քանակութիւն, օրինակ՝

0>—100

Զրօն աւելի է քան մինուս 100.

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրանոցում՝ Հոգաբարձական խորհրդարանի մէջ, Մայիս ամսոյ 12-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի երկրորդ անգամ աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու Ներսիսեան հին Դպրոցի վերնայարկը, որ բաղկացած է մի ընդարձակ դահլիճից, ուր յարմար է համերգ (կոնցերտները) տալ և 11 ընդարձակ սենեակներից. շինութեան ամբողջ երկարութիւնովը կայ ճեմելիք (կարըիդոր)։ Եւ Մայիս ամսոյ 26-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու մոմավաճառութիւնը Հայոց եկեղեցիների և ժողովրդականների համար։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան գիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, յերեկուայ 10-12 ժամն։

Պատիւ ունիմ յայտնել յարգելի Հասարակութեան և ընտիր ԾԽԱԽՈՑ սիրողներին, որ իմ նորահաստատ գործարանի մէջ, պատրաստվում են՝

ԾԽԱԽՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Բացառապէս Տաճկական ԹԻԹԻՒՆԸ ամենաընտիր տեսակներից, առանց տեղական թիւրիմիւն խառնելու։ Երաշխաւոր եմ, որ իմ գործարանում պատրաստած ապրանքը կարող է բաւականութիւն տալ ամենանուրբ ճաշակին։ ԾԽԱԽՈՑԻ գինն է 3-ից մինչև 10 րուբլի ֆունտը, սկ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԸ 1 րուբլուց մինչև 3 ր.. Հարիւրը։

Իմ գործարանը գտնվում է հեռագրական կայարանի մօտ, իսկ խանութը Արծրունու Գալէրէում, Դվօրցովի փողոցի վերայ, № 3.

Պարտք եմ համարում նախազգուշացնել պ. պ. գնողներին, որ իմ գործարանի ապրանքը բացառապէս կը ծախուին իմ խանութում։

Գործարանատէր Շահինեանց.

ՀԱՇՎՈՒԵԿՁՈՒՔ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ
ց 1-ն Մայիսի 1882.

ՊԱՀԱՆՋՔ

1. Դրամարկղ (առձեռն Թղթադրամ).		23,977 02
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկայի բաժնում .		38,739 17
3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.		2,471,166 25
4. Փոխառութիւն գրաւականով՝		
ա) Պետութիւնից ապահ. տոկ. Թղ.	1,181,024 66	
բ) » ոչ ապահ. » »	463,765 —	
գ.) ապրանքների	24,800	1,669,589 66
5. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր Թղթեր . . .		96,909 61
6. Թղթակիցները՝		
ա) Նոցա հաշիւ (Loro): . . .	651,286 59	
բ) Բանկայի հաշիւ (Nostro) .	701,338 31	1,352,624 90
7. Բողոքուած մուրհակները		7,659 80
8. Պայմանաժամը անցուցուած փոխառութիւնները.		12.000
9. Ընթացիկ ծախսեր		16.863 99
10. Կահկարասիք և սկզբնական ծախսեր		6,228 92
11. Յետ ստացուելիք ծախսեր		5,184 03
12. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր		65,996 12
Ր. Ա.		5,766,939 47

ՊԱՐՏՔ

1. Հիմնական դրամագլուխ		500,000 —
2. Պահեստի դրամագլուխ		51,000 75
3. Աւանդներ՝		
ա) Պայմանաժամով		2,013,542 64
բ) ց'պահանջ		501,076 56
գ) Ընթացիկ հաշուով.		674,614 45
4. Փոխառուած Թիֆլիսի Պետական Բանկայի բաժնից դեղջեալ մուրհակներով		266,792 78
5. Թղթակիցները՝		
ա) Նոցա հաշիւը (Loro): . . .	162,323 92	
բ) Բանկայի հաշիւը (Nostro) .	1,383,770 26	1,546,094 18
6. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 1880 և 1881 Թ.		2,997 20
7. Չվճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ դրծողութեանց		82,054 03
8. Ստացուած տոկոսները և յանձնարարականները . .		120,932 35
9. Փոխանցիկ գումարները		7,834 53
Ր. Ա.		5,766,939 47

36 ՌՈՒԲԼԻ
ՎԷՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ
ԵՓ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ ԴԷՊՕՑՈՒՄ
10—7

ԹԻՖԼԻՍԻ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի Մայիսի 13-ին

ՅՕԳՈՒՏՍ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՍԻՐՈՒՑ ԽԵԼԱԳԱՐ

Դրամ. 5 գործ. Հեղ. Մանուէլ Տամալիօ և Բաուսի, Թարգմ. Մ. Ա.ալեանցի.

Դոննա Հուանա Թազուհի	Տ. Հրաչեայ
Ալդաբա.	Օր. Վ. Գարագաշեան
Դոննա Էլվիրա	Օր. Մարի-Նուարդ
Դոն Ֆելիպպոս, Թագաւոր	Պ. Ադամեան
Դօն Ալվարը, կապիտան	Պ. Ձդայեանց
Կաստիլիոյ, Ծովապետ	Պ. Մնակեան
Լուդովիկոս Մարլիանօ	Պ. Զարեհեղեան
Դօն Ժուան Մանուէլ	Պ. Աբրահամեան
Մարկիզ դը Վիլէնա	Պ. Օրդուբադեան
Դօն Ֆելիքէրտօ դը Վէրէ	Պ. Տէր-Դաւթեան
Գաբսե Պերէզ, պանդոկապետ	Պ. Մանդինեան
Էբրնան	Պ. Սանջակ
Մանկլաւիկ	Օր. Վարդուհի

Հրեաններ ազախներ, կանայք, աղնուականներ, բժիշկներ, դիմակաւորք մարդիկ:

Дозв. Ценз. Тифлисъ, 8 Мая 1882 г.
Типографія И. Мартиросіанца.

ԱՐԴՅՈՒՆԱՒ ԹԱՏՐՈՒՄ

Երկրորդ շաբթի մայիսի 10-ին

Պ. ՕՐԴՈՒԲԱԴԵԱՆՑ

Կը տայ իւր նկարչական ճանապարհորդութեանց ամբողջ Կոյ դերասանական աշխատին խոշոր:

ԽՈՒՏԱԿ ԴՈՒՔՍՈՒՆԿ

Կատակերգութիւն 3 գործող. Թարգմ.

Ց. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Ակդիկա Քէհիկ . . . . Պ. Մնակեան
Թաղուհի . . . . . Պ. Ադայեանց
Մարգարիտա . . . . . Օր. Ն. Գաբրաշեան
Մարկիզի . . . . . Օր. Վ. Գարագաշեան
Թոմաս . . . . . Պ. Օրդուբադեան
Նիկոն . . . . . Պ. Տէր-Գրիգորեան
Պարպատիկոյ . . . . . Տ. Փաշայեան
Ծառայ . . . . . Պ. Աբրահամեան

Սկիզբն 7 8 ժամին: